

Հին Գրքերի Կոլեկցիոն
Առաջին Կարգի

~~3254~~ ԵՐԵՎԱՆԻ ԵԱՀԱՆԳԻ

3384

Գրքերի
16 հատ.

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ

Ա. Գրքերի Կոլեկցիոն

581-9 (47-925)
4-26

Մատենադարան

7/IX 1914

Ս. ՉԻՄՈՒՆԻՍԻ

1881

ՅՈՎ. Հ. ԱԹԱՆՍՍԵԱՆՑ

21889


A¹¹
116215



ԵՐԵՎԱՆ

«ՊԱՆԿ», ԼՐԱԳՐԻ ՏՊԱՐԱՆ

1881



Дозволено цензурою 6. Декабря 1880 г. гор. Тифлисъ.

Типография газеты „Цсакъ“



ՆՐՈՒՄՆԻ ՆՍ. 20. ՆԳԻ

ԻՌԻՍՏԱՆԻ ՈՒՅԻՒՄՆԵՐ

Եւ կեանքումս չեմ տեսած մի գիրք, մի բրօշուր
 չեմ կարգացած մինչև անգամ մեր պարբերական
 հրատարակութիւնների միջ ո՛չ մի յօդուած, որ
 խօսէր, հետաքրքրուէր նրանցի նահանգի ամենա-
 հարուստ բուսականութեամբ Ամենահարուստ եմ
 ասում և այդ իմ կարծիքը, որի մասին կը խոստովա-
 նուեմք թէ ընկերները և թէ ամեն մի Ներուպայի ճա-
 նապարհորդ, ես կաշխատեմ ապացուցանել իմ այս
 յօդուածումս Նմ նպատակս է ցոյց տալ թէ որ-
 քան սոսա ու բերրի է մեր նահանգը ընդ թեան
 բարեբնորով՝ բերքերով, թէ ինչպէս է սեղացի ժո-
 ղովուելը գործադրում այդ բերքերը, որքան է օգ-
 տուում իւր երկրի առատութիւնից և ինչքան է կա-
 բողանում նա արտադրել իւր արդիւնաբերութիւնը:

Ե.

Բուսականութեան վերայ խօսելու համար, ես ամեն
 ունից առաջ հարկաւոր եմ համարում դնել այստեղ
 մի քանի աշխարհագրական սեղեկութիւններ:

Ամեն մի երկրագնդի վերայ նայողը կարող է նկատ

տել, որ Երևանի նահանգը մտաւորապէս ընկած է 60° 55' ու 53° 50' երկայնութեան և 41° 10' ու 38° 50' լայնութեան աստիճանի մէջ: Երկիրը բարեխառն գոտու մէջ ընկած լինելով, նորա կլիման նոյնպէս բարեխառն է. միայն ունի ցուրտ ձմեռ և տաք ամառ: Նկատուած է, որ Երևանի նահանգական քաղաքի ձմեռուայ միջին տարեկան եղանակը տեմպերատուրան, հաւասար է—5°. 57 ի. իսկ ամառուանը 19°, 19 ի: Նինուակն ձմեռներ, կրթ եղանակը իջնումէ մինչև—18°-ի. իսկ ամառները երբեմն բարձրանումէ 32°-ի: Երևանի տեղիչ նահանգը բաժանուած է եօթ գաւառի՝ ա. Երևանի գաւառ. բ. Էջմիածնի գաւառ. գ. Աղէքսանդրապօլի գաւառ. դ. Նոր-Ռայապէտի գաւառ. է. Հին—Նախիջևանի գաւառ. զ. Սուրմալուի գաւառ և է. Շարուր—Բարաշաղի գաւառ: Նահանգի զլխաւոր լեռները, ինչպէս յայտնի է, կազմուակն՝ Արարատ կամ Մասիս լեռը, որի բարձրութիւնը հաւասար է 16,916 ֆուտի կամ ունիաչափի, և Արաղածը—Ալաղեազը—, որի բարձրութիւնն է 13,436 ֆուտ:

Գլխաւոր գետը համարուումէ Արաքսը, որ փոքր մասով անցնումէ նահանգի միջից և կազմումէ սահմանակից գետը Պարսկաստանի և Ռուսաստանի մէջ: Միւս գետերը, որոնք ուղղուակն նահանգում գլխաւոր լայնատարած գաշտերը, սորանք են՝ Արփա-

չայ կամ Ախուրեան, Քասախ կամ Աբարան, Հրազ-
դան կամ Զանգու, Գառնի — չայ կամ Աղառ դեռ,
Վեդի — չայ և այլն։ Այս բոլոր գետակները կազմու-
մեն Արաքսի ձախ վտակները, որոնք հազիւ թէ
ամառները կարողանումեն հասնել Մայր գետին,
որովհետեւ նորանց վիճակուած է ջրել շատ ու
շատ դաշտեր։

Այսքան տեղեկութիւններն աշխարհագրութիւն
նից բաւական համարելով, ես սկսում եմ իմ նկատ-
չագրութիւնը, որ, խոստովանուում եմ յայտնել, դըւ
խաւորանալէս հիմնուած պէտքէ լինի Երևանի բու-
սականութեան վերայ։ Անթիւցողը թող համողուի,
որ այսպիսով մենք մեծ սխալի մէջ ընկած չենք
լինի, որովհետեւ Երևանը իւր մտասկայ շրջականե-
րով բովանդակումէ իւր մէջ նահանգի ամբողջ
բուսականութիւնը շատ սակաւ բացառութեամբ։

ԾԱՌԵՐ .

Ծաները Երևանի նահանգում բաժանւում են երե-
կու գասակարգի՝ պտղատու և անպտուղ։

I. Պտղատու ծառեր։ Պտղատու ծառերի թւում
առաջին տեղը կարող է բռնել ճըրանին, որ գիւմա-
հումէ, ձմեռուայ բաւական խիտ ցրտերին։ Աւրիշ
ծառերը, ինչպէս յետոյ կ'ստանանք, այդ յատկու-

Թիւնից զուրկ են: Յիրանին, բաւական զխմայկուն լինելով, կարող է ապրել յիսունից մինչև ութսուն տարի. սիրումէ գլխաւորապէս կրախառն հող և խմուռ, բիշ ջուր, ածուձէ բաւականին բարձր և արձակումէ իրանից ամեն կողմ շատ ձիւղեր, որոնք կանգնած են լինում հաստ ու կարծր բնի վերայ: Փայտը բաւականին կարծր լինելով, տալիս է լաւ ածուխ: Գալով ծիրանու պտղին, պէտքէ ասել, որ նա ունի շատ տեսակներ՝ ա. Դառն ծիրան, բ. Սպիտակ ծիրան. գ. Աղջանարաթ. դ. Գեղջանարաթ. ճ. Բաղամարիկ դ. Գեառգեառ. և է. Նովրած:

Ա. դառն ծիրան: Սա շատ ընդհանրացած է այգիներում ու պարտէզներում, որովհետև չէ պահանջում ոչինչ խնամատարութիւն ու հոգացողութիւն և համարումէ ծիրանների ամենատարին տեսակը թէ իւր կորզի դառնութեամբ և թէ նոյն իսկ ծիրանի անհամութեամբ: Սորա վատութիւնը, բայց թթուութիւնից կամ դառնութիւնից, երևումէ և նորա մ.ջ, որ ունենումէ իւր հիւթի մէջ (MЯCO) մանր թիւեր, որոնք պտղի երակներն են կազմում:

Բ. Սպիտակ ծիրանը բաժանուումէ երկու տեսակի՝ բուն սպիտակ—ծիրան և կարմրագոյն—սպիտակ ծիրան: Բուն սպիտակ ծիրանը գերազանցումէ իւր այն յատկութեամբ, որ միւս ծիրանների մ.ջ չուն է հասնում. շատ քաղցր է, լաւ համած ժա.

ժամակ, և փութար նորա մեծութիւնը հասարակ
 ծիրանների մեծութիւնից չէ զանազանու ու մ. միայն
 ունի սրածայր քիթ և կոթից մինչև ծայրն ընկած
 է մի սկոտ Այս ծիրանից, որ ունի նուշ կորիզ,
 սառչու ու մէ լաւ չիր. բայց նա գլխաւորապէս գործ
 է անփութ իւր թայ ժամանակ: Ապրիլագոյն սպի-
 տակ ծիրանը նշանաւոր է իւր մեծութեամբ: Չա-
 փազանց սպիտակ լինելով, նա մի և նոյն ժամա-
 նակ ծածկո ան է կարմրագոյն ներկով:

Գ. Աղջանաբախը նշանաւոր է ո՛չ այնքան իւր մե-
 ծութեամբ, որով ի հարկէ չէ կարող աչքի ընկնել:
 այլ համեղութեամբ: Չափազանց քաղցր լինելով,
 չորանալուց յետոյ, տալիս է ամենապատուական
 դեղնագոյն չիր, որ գործ է դրուում թէ կերակրնի ի
 մէջ և թէ իբրև մրգեղէն: Ունի սպիտակ գոյն, երբեմն
 կարմրախառն ներկով ծածկուած:

Դ. Դեօգ՝անաբախը, սղջանաբախի հակասակ, ու-
 նի կանաչ—դեղին գոյն ու նուշ կորիզ, ինչպէս և
 սղջանաբախը:

Ե. Բարամարիկը, իւր հասած ժամանակ, ստանում է
 նոյնպէս կանաչ—դեղին գոյն. ունի նշի ձև. ինչպէս
 ցոյց է տալի «բադամ, նուշ» բառը: Երբ չորա-
 ցնում են, ստանում են պատուական չիր:

Զ. Դեաօգէաբախ յայտնի է իւր մեծութեամբ և
 կոլոր ձևով. ո՛չ այնքան համեղութիւն ունի և ո՛չ

սալիս է լաւ չիր. միայն համարուում է լաւ ծիրան-
 ների թւում իւր տեսքի գեղեցկութեամբ: Բոլոր այս
 ծիրանների տեսակները պատուաստուած են լինում
 դառն ծիրանների վերայ և ունենում են, առանց
 բացառութեան, նուշ կարկռ Աինում են այնպիսի
 տարիներ, երբ ծիրանի բերքը շատ կամ սակաւ է
 լինում: Ամենաառատ տարին դառը ծիրանը թաց
 ժամանակ ծախուում է լիորը — 12 ֆունտը — հինգ կամ
 վեց կոպէկով: Զորայնեղուց յետոյ, ծիրանի չիրը կոպ-
 կասից դուրս չէ վաճառահանուում, այլ մնում է նոյն
 իսկ նրանի նահանգում և ցրուում է լեռնաբնակների
 մէջ լիարը 25—40 կոպէկով:

Եւ է. նուշ բոժ ծիրանը սպիտակ ծիրանի տեսակն է
 միայն կոլոր ձևով. սա ամենից շուտ հասնող ծի-
 րանն է, մաշկը շատ բարակ. միայն այնքան փուխը
 չէ, ինչպէս սպիտակ ծիրանը:

Տանջիճի ծառը պարտեզների ու այգիների զարդն է
 համարուում: Պարտիզպան, տնկասէր բնակիչներն ի-
 րանց երջանիկ կհամարէին, եթէ ունենային իրանց
 պարտիզում կամ այգիներում 10—20 հատ տանձենի:
 Մինչև տանձենու փոքրիկ տնկին պատուաստուում,
 մեծանում, պտուղ է տալիս և նորանից արդիւնք է
 բտացուում, անցնում են բաւական երկար ու ձիգ տա-
 րիներ: Ուշ զարգանալով և ուշ պտուղ տալով, տան-
 ձենին և ուշ վայր է բնկնում. ապրում է 100-ից

200) որպիսի նորա բունը չափազանց հաստ է լինում
և; երբ խիստ ցրտերից նորա ճիւղերը չորանում են,
տանձենին նորից ճիւղեր է արձակում և նորից պը-
տուղ տալիս:

Տանձենու պտղի տեսակները հետևեալներն են,
ա. մալաչայ, բ. սինի և գ. պահունի:

Ա. Մալաչայ տանձն ա մենապնիւ տեսակն է հա-
մարում մանձերի մ. ջ. կատարելապէս հասած ժա-
մանակ ունի մոյզ — դեղին գոյն. լինում է չափազանց
ջրալի և համեղ. այս պատճառով, ինչպէս հազուա-
դիւս պտուղ, ծախում է ֆունտը տասը, տասն ու
հինգ կոպէկով:

Բ. Սինի տանձն երևելի է իւր կողը ձևով և մե-
ծութեամբ. հասած ժամանակ շատ քիչ է փոխում
իւր տեսքը և ստանում է բաց — կանաչ գոյն. այնքան
ջրալի չէ ինչպէս մալաչայ տանձը և ուտելու ժամա-
նակ խրթխրթում է առամների տակ:

Ն. Գ. Պահունի քանիչ հասնում է ուշ, աշնանը և,
կարծես, բնութիւնը նշանակել է նորան ձմեռուայ
համար. այս պատճառով բաւականին դիմացկուն լի-
նելով, պահում են մրգատներում, իբրև ձմեռուայ պա-
շար:

Կայ տանձի և ստորին տեսակը՝ այն է քոլի տանձը՝
որ բուսնում է և պտուղ է տալիս, առանց արհես-
տական փոփոխութեան ենթարկուելու իւր կազմուած-

քի վերաբերու թեամբ, ուղումեմ ասել՝ ասանց պատուաասելու: Այս վերջին տեսակից շատ սակաւ է պատահում, որովհետեւ այդպիսիները միշտ ուշխատումեն պատուասուել, փայլենի գրութիւնից ընտանեցնելով նորանց:

Ինչչենին շուտ զարգանում և շուտ վաթընկնում, չորանումէ, որովհետեւ ամենեւին չեն դիմանում խիստ ցրտերին: Նորա բունը երբէք չէ կարող հասնել այն հաստութեանն, ինչ հաստութեան հասնումէ ծիրանին կամ տանձին. ապրումէ ամենուշաուր քսան տարի. բայց պատահումէ այնպէս, որ չորանալուց յետոյ, նորա արմատներից դուրս են գալիս նոր ճիւղեր և կանգնումեն հին բնի փոխարէն: Ինչպէնու պատուր բաժանուումէ երկու գլխաւոր տեսակի՝ ընչ և պճղովի:

I. Լօջ ինչչեն իւր կողմից ունի մի քանի տեսակներ՝ ա. չուտչու կամ սրածայր նարնջի. բ. կոշար նարնջի. գ. սպիտակ ընչ. դ. սպիտակ—կարճագոյն—ընչ: Իբրև խաւոր յատկութիւնն այդ դեղձի այն է՝ որ հիւթը կամ միտն անբաժան է կորզուց:

Ա. Զուտչու կամ սրածայր—նարնջին, ինչպէս անունը ցոյց է տալիս, ունի մոյգ—դեղին կամ նարնջի գոյն և ձուի ձեւ, գլուխը սուր: Եայրի կամ գլխի ու կոթի միջանցքում ընկած է մի ճեղքուած, որ հողաթմբերի է նմանում:

Բ. Աղար—հարձակ ինչ, համով և գունով նմանելով
 ձուածե նարնջուն, զանազանուումէ նորանից իւր
 ձեով, որ գնտի է նմանում, և ծածկուած է, ինչ
 պէս միւս գեղձերը, բարակ խաւով:

Գ. Սպիտակ—ըօք զանազանուումէ վերե յիշածներէց
 իւր սպիտակ գունով և համով, որ երբեմն թթու,
 տախ և երբեմն էլ քաղցր է լինում:

Դ. Սպիտակ—հարձակայն ըօք ունենումէ շատ նուրբ
 մաշկ և բաւականին ջրալի ու համով է լինում:

Ե. Պահուածի ըօք հասնումէ շատ ուշ տերեւաթափ
 փին, երբ մինչև անգամ երկուամեկն ձիւնի նշանները
 Այդ միջոցին գեղձը բաւականին ձեռնառու գնով
 է ծախուում լիարը մի ուրիշ կամ տեղի այն ինչ
 ամառը միւս գեղձերը շատ ցածր գնով են ծախ
 ուում: Ընդհանրապէս ըօք շէշք պերտութաս է պճղով
 շէշքից և միայն գործ է անուում թաց ժամանակ
 այն ինչ պճղով գեղձը բոցի փորանից գործ է
 դրուում չորացնելու համար:

ԻԻ. Պճղովի շէշք թէև ունի շատ տեսակներ,
 բայց նորանք չեն որոշուում սուանձինն առանձին
 անուններով: Առաջին գլխաւոր տեսակը յայտնի
 է հաշի անունով, որի կորիզը—սերմը—նուշն է
 լինում: Գլխաւոր յետեւեթիւնն այդ գեղձի այն
 է, որ ամեն գեղձերից շուտ է հասնում և իբրև
 առաջին գեղձ կամ նուրբար թանգ գնով ծախուում:

Գոյնը չափազանց սպիտակ է և կարմիր գունով ներկուած. խաւը, որ ընդհանուր է, համարեա՛, ամեն դեղձի համար, շատ բիչ է լինում սորա վերայ: Միւս տեսակները յայտնի են « հասարակ պճղովի դեղձ » անունով: Այդ դեղձից պատահումէ այնպիսին, որ սպիտակ գոյն է ունենում և մեծ մեծ ու քաղցր լինում. պատահումէ և այնպիսին, որ, մաղձոտ լինելով՝ միայն չորացնելու համար է պէտք գալիս:

Պճղովի դեղձը գլխաւորապէս, ինչպէս յիշեցի, գործ է ածուում չորացնելու համար: Համբերութիւն ունեցողը չորացնումէ այն կըպհան – մաշկահան – արած. իսկ անհամբերը, չուզենալով աշխատութիւն կրել, դարսումէ արևի տակ առանց մաշկը վերցնելու: Դեղձից պատրաստուումէ մի տեսակ միրգ ձմեռուայ պաշարի համար « ալճի » անունով: Դեղձը մաշկահան անում, դնումեն արևի տակ, մինչև լաւ ցամաքումէ. յետոյ վերցնում, կորիզը հանումեն և նորա փոխարէն դեղձի մէջը լցնումեն ընկուզով, տափակացնումեն և նորից դնում արևի տակ մինչև նորա լաւ չորանալը:

Թթենին, որ մեծ մասամբ աճումէ Երևանի և Նախիջևանի գաւառներում, շատ երկարակեաց ծառերից մինն է համարուում: Նորա տարիքը պէտքէ հաշուել ո՛չ թէ տարիներով, այլ դարերով: Միումէ բարքարոտ ձորեր ու հովիտներ. այս պատճառով ձորերը

երբևին մարդու ձեռքի աշխատանքով լիքն են լինում թթենիներով: Թթենու թէ փայտը, թէ տերևը և թէ պտուղը հարկաւորում են մարդուն՝ փայտից կամ շինում են ասիական քաղցրահամ շինարարներ՝ սաղեր, քրամանչաներ, թափեր և կամ դործ է ածուում վառելու համար. տերևով կերակրում են շերամին, որով մասամբ պարապրում են Նախիջևանի դաւառում. իսկ պտղից քաշում են օղի, չորացնում են և դործ են դնում թաց ժամանակ:

Յայտնի են թթենու հինգ տեսակը՝ ա. բեդանայ, բ. ջրո, գ. շահ, դ. խառ և ե. սև:

Ա. Բեդանայ կամ Ծափնա-Լը բուռթիւն մեջ է կարելի տեսնել ինքն իրան բուռած՝ նա պատուաստուում է: Այս թուրք միւս թթերից շուտ է հասնում և նշանաւոր է իւր մեծութեամբ, քաղցրութեամբ և նորանով, որ կորզից զուրկ է լինում կամ՝ աւելի ճիշտ է ասել, նորա կորիզը փուչ, դադարկ է լինում և աճելու անընդունակ: Այս տեսակից միայն մարդիկ կարողանում են չորացնել և շինել թթաչիւր:

Բ. Ջրո կամ հարզով ԼԼԷնին, ինչպէս բուռթիւնը նորան առաջ է բերել, աճեցրել է, այնպէս էլ տալիս է մարդուն իւր բերքը, որ լինում է բաւականին անհամ, համեմատելով « Բեդանայ » թթի հետ: Ներամապահութեամբ պարապրող սորա կորզից ցա-

նու՛մէ ահագին հողեր և ստանու՛մէ անկիւների մեծ
 քանակութիւն իւր շերտմները կերակրելու համար
 Այս թու՛թը հասնու՛մէ բաւականին ուշ, երբ բե-
 դանան վերջանալու վերայ է լինում, և բացի ու-
 տելուց, գլխաւորապէս օդի քաշելու համար է գործ-
 ածուում:

Գ. Եւհ—Րու՛ն, որ իւր մեծութեամբ նման է բե-
 դանայ Ռեին, հասնելու ժամանակ ստանու՛մէ սպիտակ
 —կարմիր գոյն և շատ քաղցր է լինում: Ետիս կո-
 րիզն արգելու՛մէ իրան մրցել բեդանայ թթի հետ:

Գ. Խառ—Րու՛ն երկար տարիներ սպրտելու ընդու-
 նակութիւնից զուրկ է. նա հաղիւ կարողանու՛մէ անց-
 նել յ'առն տարին, այնուհետև կամ շորանու՛մէ
 կամ փթում, ոչնչանում: Գոյնը սև է. համը եր-
 բեմն շատ թթու. տալիս է խիստ կարմիր գոյն: Մա-
 բուր սպիտակ հագնուած տիկնոջը կամ ողամայր-
 գուն խառ—թու՛թը սպառնու՛մէ անդականել իւր
 ներկով, երբ նորանք գալիս, ուզու՛մեն մի քանի հա-
 հատիկ քաշել նորանից: Խառ—թթի կո՛թը շատ
 պինդ է. նորան պէտքէ հատիկներով քաղել այն
 ինչ միւս սպիտակ թթերը թափ են տալիս կա-
 ցիններով կամ ուրիշ մի գործիքով. բաւական է մի
 թեթեւ շարժում, և այդ սպիտակ թթերը, կար-
 կտի պէս՝ թափուումեն, թթի շարսաւնելի մեջ:

Կայ և մի ուրիշ սև, քաղցր թու՛թ, որ հինգերորդ

տեսակն է կազմուամ Սա իւր մանր հատիկներով ոչ
որի ուշադրութիւնը չէ դրաւում և աճումէ առանց
խնամատարութեան

Ընդհանրութեամբ նման սպրուակէ երկար տա-
րիներու Փայտը խիստ կարծր և կարմիր գոճաւոր լի-
նելով, առասօրէն գործ է դրուում կահ կարասիներ
շինելու համար. այս պատճառով նա համեմատաբար
շատ բարձր գնով է ծախուում: Այսովհետև ընկուզե-
նին իւր մեծութեամբ հետեւապէս և մեծ ստուե-
րով բռնուակէ ընդարձակ տեղ, այս պատճառով նա
անկուումէ գլխաւորապէս ձորերում, այգիներից դուրս:

Ընդհանրութեամբ բաժանուումէ երեք տեսակի՝ ա. քեթան
— քեօհնակ կամ քաթանէ հազուատ ունեցող ընկոյզ
Բ. կուռ ընկոյզ և Գ. խրճճկենի ընկոյզ:

Ա. Քեթան — քեօհնակ կոչուող ընկոյզն ստացել է իւր
անունը կեղևի խիստ բարակ լինելուց. նորա մէջը
շատ տուզ և սպիտակ է լինում:

Բ. Կուռ — ընկոյզը վատ տեսակն է համարուում
ընկոյզների մէջ. խրճէպը — կեղևը *) չափազանց հաստ
է և միջուկը դժուար է բաժանուում կեղևից: Ի նշ-
պէս, որ կեղևը դժուար է բաժանուում միջուկից,

(*) Երկու գծերի մէջ դրուած բառերը բացատրու-
թիւն են կազմում գաւառական խօսքերի, որոնք դիտ-
մամբ նախադասուած են այս յօդուածում:

«յուպէս և հաշար զժուար է: բաժանուում կեղևից կամ
կակալահան լինում *): Բացի այս պակասութիւնից
հառ ընդդէ միջուկն երկմն սեւացած է գուրս
գուլս:

Գ. Խճճ հէնի — ընդդէն իւր կաղմութեամբ աւելի մե.
տննումէ քաթանի: հազուստ ունեցող ընկոյղին:

Վեռանին երկար տարիներ ապրելու յասկու
թիւնից զուրկ է. որովհետեւ խիստ ցրտերին՝ շէ կա-
րողանում գիմանալ Պտուղը լինումէ: սեւ և չսպիտակ:

Սեւ հեռաւ շունի այնքան քաղցրութիւն, ինչ քան
ունի սպիտակ կեռասը: Սպիտակ կեռասն՝ իւր կողմից,
բաժանուումէ երկու տեսակի՝ ա շուն հասնող և Բ.
ուշ հասնող:

Ա. Շուն հասնող հեռաւ բոլորովին բարակ մաշկ
ունենալով, ծածկուումէ հասած ժամանակ կարմիր
գոյնով:

Բ. Աւշ հասնող հեռան արդէն յայտնի է, միայն
այս պէտքէ նկատել, որ նա լինումէ մեծ հատիկներ-
ով և փոքր հատիկներով, երբեմն տնհամ և երբեմն
քաղցր:

(*) Պակալ բառով երևանում հասկացուումէ այն
կանաչ ծածկոյթը, որի մէջ պատասպարուում է բուն ըն-
կոյղը իւր կեղևով. իսկ Թիֆլ'սեցիների բարբառով կա-
կալ նշանակումէ. ամբողջ ընկոյղ:

Բայց, եթէ իւր բնութեամբ թթու չը լինէր, նորան շատ անգամ կարելի էր ընդունել սե կեանքի տեղը զանազանութիւնը կեռասենու և բալենու մէջ նորանում է, որ կեռասենին ածումէ բաւական բարձր, բոլորովին ուղղահայեաց. ճիւղերը բարձրանումեն նայնպէս բնի ուղղութեամբ. իսկ բալենին ընդունումէ զանազան ուղղութիւններ և նորա ճիւղերն արձակուումեն աւաւելապէս հորիզոնական դժով, իսկ պտուղներով ծանրաբեւեռում ժամանակ, թերուումեն դէպի դեռին: Բալենու տերեւները, նման լինելով կեռասենու տերեւներին, զանազանուումեն իրանց փոքրութեամբ և աւելի կոշտութեամբ: Բալէ տեսակները յայտնի չեն առանձին առանձին անուններով: Չորայրո՞ծ ժամանակ գործ է ածուում զանազան կերակրեղէնների մ.ջ: Գլխաւորապէս օգտուումեն նորանից թաց միջոցին:

21800

Շորին — սալորենին — ցրտերի չէ կարողանում դիմանալ, այնու ամենայնիւ դեղձնուց երկար կեանք է ունենում: Ամենահաստ սալորենու բնի որամաղիճը հապիւ կարող է հասնել կէս արշին երկայնութեան: Յայտնի են սալորի հետեւեալ տեսակները՝ ա. դամբուլ. բ. դեղնաշոր, գ. դեօզջայ, դ. սեշոր և է. հասարակ շոր:

A 16215

Ա. Իոսէֆէնու պտուղները ձու աճել են լինում և թթուաշ համով: Դամբլի մե տեսակը յայտնի է



խաթմունք բարձրագի — արկնոց մաս — անուշոպ, որ
 իմունդ — կապոյտ գոյն է ունենում ե իստ մեծ մեծ
 շինում մե

Բ. Գեղնաշ շրջ հասնում է ուշ, աշնանը՝ և պահու-
 ում է ձևն ու ալ համար. իբրև պաշար: Կարկը,
 հեշտ բաժանում է իւր մտից կամ հիւթից: Այդ
 յասկու թիւնն ունի և դամբուլը:

Գ. Գեօգըն տմենադնիւ տեսակն է համարում
 շրթի մէջ. բոլոր սրտու դնիւրի հակասակ, նա ո՛չ թէ
 ուտում է հասած, այլ խակ ժամանակ. ծաղիկը
 վեր տալուց յետոյ, նա ցոգոլակ — խակ — ժամանա-
 կից գործ է գրում և մինչև հասնելը վերջանում է:

Սաշորի սև և սպիտակ անասկները խակ ժամանակ
 « մենեկն » է կարելի ուտել իսկ հասած ժաման և
 շատ բիշ նորանք գլխաւորապէս ծառայում են, չո-
 բացրած ժամանակ, կերակրելնների համար:

Սմենարդիւնաւէտ, պալաուս ծառերից մինն է
 և փշաքենի: Նա շատ աճող է. սիրում է սև հող
 ե. սպրում է երկար տարիներ. ունի շատ հոտուէտ
 մանր ու գեղին ծաղիկներ և փոքրիկ տերեւներ, որոնց
 դրսի կողմը լինում է սպիտակ, ծածկուած ալիւրի նման
 փոշով: Փշատենու պտուղը այսպէս է նկարագրում
 մի լեռնաբնակ գիւղացի, որ ստաջին անգամ տես-
 նում է նորան: — « Մի կտոր փայտի վերայ մի փոքր ա-
 լիւր են կպցրել, վերան: կարմիր շապիկ հազցրել և

անուներ դրել՝ փշատ ։ Եւ իրաւի, հասած ժամա-
նակ, փշատի կարմիր մաշկը բաժանուումէ սպիտակ
հիւթից, իւր մօկից, որ իսկապէս ալիւրի նման փոշի
է, քաղցր համով։

Փշտի տեսակները հետեւեալներն են՝ ա. մամուս-
փշատ, բ. ունար և գ. բիւրդ - բողան։

Ա. Մամուսփշտը ամենապատուական տեսակն է և
ծախուումէ բարձր գնով. սա իւր մեծութեամբ նմա-
նեցրած է մատի, ունի կարմիր մաշկ և ուտելու
ժամանակ ազատ կերպով անցնումէ կոկորդից։

Բ. Ունարը համեմատաբար փոքր է լինում. և այժ-
տային ձևով իսկ և իսկ նման է ունար կոչուած
պողին։

Եւ Գ. Բիւրդ - բողան (բուրդ - խեղդոց) կոչուած
ծիծաղալի անունն « ա ա ճ. ն » մէ այդ տեսակի վատ
յատկութիւնից։ Բիւրդ - բողան փշտը ո՛չ կարմիր
գունաւոր, այլ բոլ է և ուտելու ժամանակ մնումէ
երբեմն մարդու կոկորդում և ակամայ ստիպումէ
հաղալ։

Սերգեյեֆն ո՛չ շատ հաստանումէ ուրիշ ծաւկրի
նման և ո՛չ շատ բարձրանում. լինումէ բաւական
պողաւէտ. հասնումէ ուշ աշնանը, և պահումէ
ձմեռը գործ ածելու համար։

Խնչերեֆն երկարակեաց ծաւկրից մէնն 1. և
պաւտեղները ու այդ ների դարդն է կաղմումս կար-

միր — վարդապետն խնձորը այն պատուին է, որ երբեմն
 դժբաղդութիւն է ունենում նիւթ դառնալ անհամ
 բանաստեղծների անհամ ոտանաւորների համար և
 նորա գոյնի. հետ համեմատուումն օրիորդների կար-
 միր սյուները:

Խնչորէնու պատուը շատ ու շատ տեսակներ ունի.
 միայն յայտնի են տասներեքը՝ ա. իսպիր, Բ. դնուդ,
 գ. Հաջի — Հուսէին — Ալի, Դ. դալաթայ, Է. Քեալըլայի
 — Ջաֆար, Ն. Ախալըլայ, Է. Ջաննաթ — ալմասի,
 Ն. պլուդ, Բ. սուլթան, Ժ. հարօն, Ժա. կալախնձոյ,
 ԺԲ. շաքարկենի ԺԳ. դեամուր — ալմասի:

Առաջին յերեք տեսակը իսպիրը դնուդն ու Հաջի
 — Հուսէին — Ալին պահուելի են:

Իսպիրն սպիտակ — դեղնագոյն է, հասած ժամանակ
 կարմրախառն կերպարանք է ստանում, համը
 քաղցր է:

Ջնուզը երկար է, ձուածե, գոյնը դեղին, համը
 մարխոշ — թթուաշ:

Հաջի — Հուսէին — Ալին թէև երկար է ձևով,
 բայց ունի քաղցր համ: Մնացած տեսակները
 մինչև աշունը հասած, վերջացած են լինում: Ամե-
 նից շուտ համուողը շաքարկենին է, որ լինում է
 խիստ փափուկ և քաղցր:

Կալախնչորը ստացել է իւր անունն այն պատճա-
 ուով, որ նա հասնում է կալերի ժամանակ: Մեր յի-

շած տասներեք տեսակ խնձորների մէջ ամենապատեւականները կարող են համարուել ախարչիսայ և ջաննաթ պլմասի — դրախտախնձոր — տեսակները, որոնցից վերջինի մէջ կորեզը չքաշրխոււմ, շարժուում և նշանաւոր է իւր թունդ կարմիր գոյնով, հոտով, համեղութեամբ և փափկութեամբ:

Ինձ մնում է միայն յիշել այստեղ նայնպէս երկու ծառ, որոնք թէև խակապէս աճում են տար երկաներում, բայց որոնք փոքր թուով գտնուում են և մեզ մտա՛նք նրեանի նահանգում: Այդ ծառերն են՝ նշինչն և Ֆնդխենին — տկոզենին:

II. Անպատու ծառեր: Գալով անպատու կամ վայրենի ծառերին, պէտք է ասել, որ նորանց շատ սակաւ տեսակներն են գտնուում նրեանի նահանգում: Անպատու ծառերի բազմաթիւ տեսակները լինում են գլխաւորապէս անտառներում: Բայց սորանցից զւրկ է նահանգը: Նթէ բիչ թէ շատ պատահում են անտառի նշաններ, այդ թի՛ֆլիսի նահանգի սահմանների մտա են և մասամբ Գարալսզեազի գոււառում:

Ժողովուրդը, փայտի կարօտութիւն զգալով, աշխատում է արհեստական անտառներ անկել Այդ միջոցին են գիտում գլխաւորապէս Արարատեան գաւառի բնակիչները: Անն կալուածատէրներ, որոնք ահազին տարածութեամբ անտառներ ունեն անկած: Այդ անտառների մէջ միակ տնկուող ծառը բարդու մի

շատ լաւ տեսակն է, որ բոլորովին ուղղաճիւղայ
 կերպով բարձրանում է և մի տաս տարուց յետոյ
 հաստանում է այնքան, որ կարելի է գործածել
 սանիքների վերոյ գցելու համար: Բարդու մի ուրիշ
 տեսակը, որ նոյնպէս առատ թեամբ անկում է
 անտառներում, յայտնի է «բեալամբու» անունով, որ
 ունի կապուսագոյն հալթ - հաւասար կեղև: Նորա
 ձիւղերը ամենեւին չեն հաստանում: ամեն մի տա-
 րուայ արձակածը ձմեռը չորանում, վայր է ընկնում
 Քեալամբուի լաւ յատկութիւններից մինն ևս այն է,
 որ նորա կարելուց յետոյ արմատից շատ հեռու,
 դուրս են գալիս հարիւրաւոր նոր շէր, որոնք ապա-
 գայում մեծանում, հնի սեղը բռնում են:

Առեփն սիրում է ջրով առատ տեղեր: այս պատ-
 ճառով նորան միշտ անկում են ջրերի ափերում: Նա
 շուտ մեծանում, հաստանում, բայց փայտը շատ
 փթռակ է լինում: այնպէս, որ ոչ լաւ կրակ է տա-
 լիս և ոչ գործ է ածուում հիւսներից կահ կարաս
 սիքի համար: Ծայտնի են ուռենու հետեւալ տե-
 սակները ա. ձիւղ, Բ. սալքի և Գ. ալափիշիկ:

Ծիլ - ուռն անկում է առուակների ափերին: Նորա
 ձիւղերից կթոյներ, քաղալակներ - փոքրիկ կթոյներ -
 գործելու համար: և, կարծես, նորա կարմիր, գիւ-
 լաթեք ու ձկուն ձիւղերը հինց այդ նպատակի
 համար լինեն ստեղծուած: Ծիլ - ուռն ամենեւին չէ

բարձրանու մ. այդ երևի նորանից է, որ ճիւղերը ամենայն տարի կտրատու ու մեն:

Առջին (ПЛАКУЧАЯ ИВА) բառական բարձրանու մէ, որ սկսու նման. բայց նորա շո՞ք բարակ ճիւղերը բարձրութիւնից կլկին բարձր են ընկնում և, կարծես, մասամբ ներքերի մէջ ընկղմած, լուռ ու մունջ արտատու ու մեն:

Եւ Գ. Աշխիշիկը, ինչպէս և ճիւղ ուր, չէ մեծանում: Գարունը եկած ժամանակ, ամենից շուտ նա է ծաղկում և ծաղկները, որոնք եզրագոյտայունի նման կարգով կպած են լինում ճիւղից, նմանում են մաշկահան արած փշատի, միայն լինում են փոքր ինչ մոխրագոյն:

Միւս անպատու ծառերից Նրեանի նահանգում աննշան անտառների, ձորերի, հովիտների մէջ, շատ թէ քիչ գտնուում են կայնի աճարի, (որի պտուղները լինում են անկիւնածե), հացենի, կեչի, հակակ (АКАЦИЯ) և ուրիշ աննշանները, որոնց յիշին աւելորդ կլինէր:

Այսպէս ուրեմն ես թուեցի մանրամասնա, որ նահանգում գտնուող բոլոր պտղաուր և անպտուղ ծառերը:

Անպտուղ ծառերի փայտն այնքան չէ նահանգում, որ աւելանալով, կարելի լինէր արտահանուել նա այնքան է, որ կաշտղանում է լրացնել միայն բնա-

Կերչիկի պատուհանները

Մաս ապառուցները նայելէս չեն արասհանուում. ուրեմն նորանցից չէ ստացուում այն օգուտը, որ կարելի էր սպասել Այդեակերի ու պարտիզպանների օգուտը ծառապառուցներից այնքան է լինում, որ նորանք օրական հասած պատուղը տանում փողոց, շատ չնչին գնով ծախումեն և իւրեանց օրական անհրաժեշտ պատուքը հողում իսկ մնացած աւելորդ մասը, որ այլ ևս հնար չեն գտնում վաճառելու, չորացնումեն և պահում անային գործածութեան համար Զորացնելու գործողութիւնը շատ անհողութեամբ է կատարուում: Պատուհան արեւի տակ եղած ժամանակ, շատ անգամ անձրիք ծեծում, ցիւխ մէջ է թաթախում նորան: և այս կերպով պատուղը կորցնումէ իւր արժէքը: Բայց եթէ նահանգի ժողովուրդը, որ շատ անգամ նուիրու է իրան այդեգործութեան և պարտիզպանութեան, միշտ աշխատէր ազնուացնել պատուհանների տեսակները և չորացնէր նորանց ինչպէս հարկն էր՝ ընտրութեամբ, անկասկած, կարելի էր աւել, որ ծառապառուցները, նահանգից դուրս վաճառահանուելով, մ.ժ արդիւնք կարող էին տալ: Այն ժամանակ նահանգը իրաւո նք կունենար պարծենալու իւր աշխատութիւններով ազնուացած պատուհաններով՝ և նորանցից ստացուած օգուտներով:

Նա կգտանամ այժմ դէպի գաշտային բոյսերը և
կաշխատեմ աւելի երկար խօսել նորանց մասին,
որովհետև նորանք նահանգի գլխաւոր հարստութեան
այբիւրն են կազմում:

Ի.

Նրեանի նահանգում գաշտային բոյսեր կազմում են՝
բամբակ, բրինձ, ցորեն, գարի, կորեկ, բնջիթ, կտա-
ւաս, կանեփ, գեռչակ, արևածաղիկ, ոսպ, սիսու,
լոբի և ուրիշները:

Առաջին չորսը՝ բամբակը, բրինձը ցորենը և գա-
րին արդիւնաբերութեան գլխաւոր աղբիւրն են հա-
մարուում գաշտային բոյսերի մէջ:

Ա. Բաճքաճի երկու տեսակն է յայտնի, տեղական
սերմից և ամերիկական սերմից ստացած բամբակը:
Ամերիկական բամբակը գերազանցուում է տե-
ղականից իւր թելերի երկարութեամբ, փայլու-
նութեամբ և քնքշութեամբ: Տարիների ընթացքում
կլիման և հողն ունենում են իրանց ներդրածու-
թիւնը և ամերիկական սերմից ստացած բամբակը,
կորցնելով իւր արժանաւորութիւնները, փոխարի-
նուում է տեղական լամբակի:

Հասկացողութիւն տալու համար, թէ բամբակը
իրբև փաճահանութեան: իւթ, ինչ չափով է գուրս
տարուել երկրից դէպի Ներսուպ և թէ: ահանջի ժո-

յովուրդն ինչքան օգուտ է բաշում մի տարուայ մէջ
 այլ լեւրբից, առաջ եւմ բերում մի բանի հետաքրքիր
 թուանշաններ:

.. Պաշտօնական տեղեկութիւններն նայելով, 1861
 թուականին Երևանի նահանգից արտահանուած է 30000
 փութ բամբակ, 1862 թուականին 60000 փութ, 1863
 թուականին 150000 փութ, 1867 թուականին 132,810
 փութ և 1877 թուականին 149,984 փութ... (Экономические очерки Эриванской губернии, М. Сагателова).

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1873 թուականի
 5-դ համարում գրում է:

.. Մաքսատան հաշիւներից երևում է, որ Երևանի նահանգում 1870 թ.ին վար եղել է 23076 գեւեաւին հողատեսից ժողովել են 276,876 փութ մաքրած բամբակ. Ե.յս ժամանակ բամբակի փութը եղել է միջինը հաշուով 5 մանկթ. ուրեմն Երևանի նահանգը այդ թուականին արտադրել է 1,384,380 մանկթի...:

Իթէ պ. Մ. Սաղաթէլեանցի բերած թւերը ճիշտ են, ուրեմն 76 և 77 թուականներին նահանգից աւելի քիչ բամբակ է արտահանուել, բան թէ 70 թւականին, ինչպէս ցոյց է տալիս «Մեղուի» վերոյիշեալ համարը: Թւերի տատանման պատճառը, կարծում ենք, պէտքէ այն լինի, որ մի տարում քիչ, միւս տարում շատ հող է պարագեց ուում բամբակի համար և բացի սորանից լաւ ուշադրութիւն չէ դարձնուում եղկիրը պարարտացնելու վերայ: Բայց

եթէ ըստ մշակութեան շնորհիւ ամեն մի դժուար-
տիանից ստացուի 18 - 20 փութ և ոչ թէ 12, ինչ-
պէս երևումէ ըստդի հաշուից և աւելի հող պար-
տապարտցն էի այդ նպատակի համար, այն ժամանակ
միայն բամբակի վաճառահանութի. նից նահանգի ժո-
ղովուրդը կրկնապատիկ օգուտ կարող է տեսնել
Չըպէտքէ մոռանալ, ի հարկէ, և այն հանդամանիքը,
որ բերքի անունն օտարների մօտ բարձրացնելու և
նորա վաճառահանուելուն միջոց տրու համար, հար-
կաւոր է խոյս տալ մեր վաճառականութեան միջ-
դոյժապրուող ամեն մի խարդախութիւնից, բաժակի
առուտուրի ժամանակ, և աշխատել ոչքան կարելի
է, մաքութիւն պահպանել այդ բերքի դուրս բե-
րելու օրէից մին և նորա տրտասահման ուղարկելը:

Բամբակի մշակութեամբ պարտապումեն բացասա-
պէս երևանի, Նախիջւանի, Նջիսիւսի և Շարուր -
Նաղաւաղիսպիան գաւառներում:

Բ. Բրէնչը դաշտային բշտերի միջ աւելի ինստ-
մատարութիւն է պահանջում բայց մի և նոյն ժա-
մանակ իւր սուստ բերքով աւելի է վարձատրում
մարդու, քան թէ շատ ուրիշ դաշտային բոյւերը:
Տալիս է աշխիւնք մէկին 20 - 30:

Բրնձի երկարաձիգ արտերն ընկած են լինում սո-
վորաշար ջրով սուստ տեղերում կամ նոյն իւր ջրերի
ափերին: Սոյանից կարելի է հասկանալ, որ բրնձը

շատ է սիրում ջրային տեղեր կամ աւելի ասել
 ինչպէս ձուկն առանց ջրի, այնպէս և չալթկի ար-
 տերն առանց մշտական ջրի աներևակայելի են։ Յա-
 նելու օրից մինչև քաղելուց փոքր ինչ առաջ, ջուրն
 անսպառ օրէն բլնձի մարդերի մէջն է լինում։ Մարդերը
 պարտիզում շինուող կանաչեղէնների մարդերին են
 նմանում այն զանազանութեամբ միայն, որ առաջին-
 ներն աւելի խոր են լինում և թմբերն աւելի ա-
 մուր, ցխով շինուած, ջուրը կանգնելու համար։ Գոր-
 տերը կանգուն ջրերի այդ թաղաւորները միշտ ան-
 բաժան են լինում չալթկի արտերից. այնպէս որ, ուր
 կայ չալթկի արտ, ա՛նտեղ և պէտքէ լինեն դորաներն
 իրանց արտահոսութեամբ և անխորժ, զգուել՛-
 կրկուոցով։ Չալթկի խնամատարութեան ետեւից ընկ-
 նելով, շատ անգամ մարդիկ մնասումեն իրանց առող-
 ջութեանը։ Առուօտուանից մինչև երեկոյ, քաղհան
 անելու ժամանակ, բանւորները պարտաւորուած են
 ընկնել չալթկի մարդերի մէջ և ներշնչել նորանց
 միջի ապականուած, հոտած ջրերի գոլորշիներն և
 մի և նոյն ժամանակ ենթարկուել ուկրացաւու թեան
 կամ «րեվմատիզմ» ասուած հիւանդութեանն, որ
 առաջանումէ գլխաւորապէս խնամութիւնից։

Ամենաերևելի բլնձն տաքող ջրահանքի մէջ հա-
 մարուումէ Աղբաշ գիւղինը, որ ընկած է Բառնի
 գետակի վերայ, Արարատի հիւսիսային կողմի դաշտա-

վայրու՛մ: Այդ բրնձի ղլխաւոր յատկութիւնն այն է,
որ եփելու ժամանակ, համարեա՛, երեք, չորս ան-
գամ աւելի է մեծանում և թանձրանումէ ջուրը,
որի մէջ եփուումէ ինքք: Սա մի նշանաւոր յատկու-
թիւնն է, որից զուրկ են շատ տեղերի բրնձները:

Երկրի այս արդիւնաբերութեան համար մինչև
այժմ չեն եղել կատարելագործուած, կամ բիշ ի՞նչ
շատ աշխատութիւն թեթևայնող մեքենաներ, ո-
րոնց միջոցով կարելի լինէր չալթկից բրնձ ստանալ:
Չալթուկը նահանգում սովորաբար ծեծուում, դժգե-
րամ՝ նահապետական մի տեսակ շինութիւնների մէջ,
նահապետական գործիքներով, որոնք դանդաղօրէն
շարժուում են ջրի միջնորդութեամբ: Բայց վերջին
ժամանակներում գերմանացի ինժեներ Ծոն Ներ-
նոննէն պատրաստել է այդ նպատակով մի մեծ շի-
նութիւն, ուր բացի չալթուկ ծեծելուց և մաքուր
բրնձ դուրս բերելուց, նա պէտքէ մաքուր ալիւր
պատրաստի: Այդպէս ուրեմն այն բանի համար, որ
մեր ուշադրութիւնը չէ դրաւում, մտածում են օ-
տարները և խլում են մեր թղուոր...
Ձը հեռանանք մեր նպատակից:

Բ. Յ որնի վարուցանքով պարապում են նահանգի
ամեն գուտուններում և սորանից ստացած հայն ընդ-
հանուր գործադրութեան մէջ է նահանգի ժողո-
վրդի համար:

Յ քէնչ լինուի աշխատանք և դարձանայան, կա՛ր աշ
 նախար և դարձանայան Ա յի հայտար յի կր՛ու գլխու աշ
 տեսակն է յայտնի՝ կարճա՛հատ և սպիտակահատ:

Աարհրահարը երկու տեսակի է բաժանուում՝ նու ալ
 կարճահատ և լիքը կարճահատ, որ նշից ստացած
 հայը թէև համեղ, բայց սև է լինում: Սպիտակա-
 հատ ցորնի նոյնպէս երկու տեսակն է յայտնի՝ սա-
 բի—բուղղայ—դեղնադոյնցորեն—և սպիտակահատի ցո-
 րեն: Ամենա՛համեղ, սպիտակ լաւաշ (թոնուում թլաս
 հայ) դուրս է գալիս վերջն տեսակից: Թէ՛ւ դեղնա-
 դոյն ցորենը լ՛նուի, աւելի լիքը և մեծ հատիկներով,
 բայց նորանից շատ անգամ անկաշելի է լինում պատ-
 րաստել լաւաշ, որովհետև սորա հա՛հար խմորը պէտք է
 ձգողական բնաւորութիւն ունենայ:

Ցորնի հացը ընդհանուր գործադրութեան մէջ
 լինելով, այդ հացաբոյսից շատ քիչ է վաճառահա-
 նուում և այն ամենաուատ տարիներում: Արևանի նա-
 հանգում ամենապատուական ցորեն դուրս է գալիս
 Նղուարդ, Արզաքան և Ալախարս գիւղերում: Ամենա-
 պարագոտ հողը սալիո է 15-ից մինչև 20 անգամ
 աւելի ցորեն, որ բուսնում, ամեն տեղ ասանց բա-
 ցառութեան թէ լեռների ստորոտներին և թէ դաշ-
 տերում:

Խնամատարութիւն շատ քիչ է պահանջում ցո-
 րենը. նորան բաւական է միայն երկու շաբաթը մի

անդամ ջրեղ և ճու. իո ամսի կիսից դաշտերում արդէն
 նա կսկսի բողբոջել Բայց անշուք կամ դեմի ցորենը
 այդ ևս չի պահանջում: Գլուղացին մի անդամից հո-
 դը վարումէ և, ցորենը ցանելով, հեռանու մէ իւր
 սունը, մինչև որ կը դայ հնձի ժամանակը:

Միւս հացաբոյ. երկից, ինչպէս վերը յիշեցինք,
 դուրս են դալիս գարի և կորեկ, որոնցից հաց
 են պատրաստում մի միայն վրանաբնակ այ.բնա քըլ-
 դերը և թարաբեամայ թուրքերը:

Նորեկը, համեմատելով միւս հացաբոյսերի հետ,
 շատ արդէնաւոր է. նա տալիս է մէ/ն 150 - 200 և.
 երբեմն աւելի: Աժան տարիները նորա 30 փուլը
 ծախուումէ երեք կամ չորս մանէթով այսինքն չորս
 կամ հինգ անգամ ցորնից պակաս դնով:

Քնճելիքը և կտաւատը ցան. լուսնն առանձին ար-
 տերում, ինչպէս միւս հացաբոյսերը: Առաջինից ըս-
 տացուումի, շերբախտ, ձէթի ամենալաւ տեսակը, հո-
 մարեա՛, առանց հոտի և համով իւղի նման, որ պա-
 սերին դործ է դրուում կերակրերի մէջ. իոկ երկրոր-
 դից ստացուումէ հասալիակ ձէթ, որ ժ-ղովրդի ստո-
 բին պակարողը նոյնպէս դործ է դնում թէ կերա-
 կրերի մէջ և թէ վառելու համար:

Վանեփը, դիւ շակը և արեւածողիկը սռանձին
 սռանձին տեղ չեն բունում դաշտերում. նորա՛ք ցու-
 նուումն զխաւորապէս բաճրակի հետ խաւը կամ

միւս հացաբոյսերի հետ, առանձին բաժանման ներքէ մէջ
 կամ արտերի կողքերին Գեռ չակը ցանուումէ, բա-
 ցաս ապէս դիւղացուն վառելու ձէթ մատակարարե-
 լու համար նորոնից ստացած իւղը լուծող րնաւո-
 րութիւն ունի. այս պատճառով փորակապ հիւանդ-
 ների համար դեղի տեղ է ծառայում: Ի նքը բոյսը
 աճում, բաւականին բարձր և արձակումէ իրանից
 շատ ճիւղեր, որոնց միջուկը եղեղի նման դատարկ
 է լինում: Տերեւներն այնքան լայն են և այնքա՛ն ստուեր
 են արձակում իրանից, որ շատ անգամ դաշտի հող-
 նած մշակները կարող են՝ պատասխարուել նորանց
 ստուերի տակ Գեռ չակի սերմը պահուած է լինում
 վշտ կեղեւների մէջ, որոնք կալը դուրս բերած ժա-
 մանակ արեգակի ներդործութիւնից չորանալով,
 ճեղքուում են և, ճայթճայթելով, դուրս են թռչում
 այս ու այն կողմը: Կանէփի չէ գիւնարախանի—արեւա-
 ծաղկի—սերմերը գործ են դրուում առաւելապէս ու-
 տելու համար: Առաջինի ցանելու դիտաւար նպատակն
 այն է, որ այդ բոյսի թելերից զանազան գործուածք-
 ներ են շինում հագնելու համար. թէև դիւղայի նե-
 րի ձեւքից այդ գործուածքները շատ կոպիտ են
 դուրս գալիս:

Կանէփը, գեռ չակը և արեւածաղիչը, աճում են նահանգի
 բոլոր դաւասաներու: Բացի Բայազէդի դաւասից և
 մի քանի սարերին կից տեղերից: Այդ նորանից է,

որ յիշեալ իւղարոյսերը զլիսաւորապէս շք տեղեր
են սիրումն

Այլ և մի այլ իւղարոյս սորոկ անուանով, որ ա-
ռաւելապէս բուսնումէ Նոր—Բայազէտի գաւառումն:
Սորոկից ստացած իւղն անկարելի է լինում գործ
ածել կերակրների մէջ, բայց վաւերու և մանաւանդ
ներկերի համար շատ լաւ նիւթ է համարուում.
այս պատճառով նահանգից արտահանումէ վա-
ճառելու համար:

Ոտը և սիւնը բուսնումն զլիսաւորապէս Նոր—
Բայազէտի և մասամբ Եջմիածնի գաւառներում, ուր
ամառը բաւականին հով է անցնում: Թէև այդ բոյ-
սերը պատ օրերում կերակրների զլիսաւոր նիւթերն
են կաղնում և հետեւապէս մեծ քանակութեամբ
սպառուումն ժողովրդի կողմից, այնու ամենայնիւ,
երբեմն վաճառահանումն նահանգից դուրս, մա-
նաւանդ սիւնոքը:

Լորին այնպիսի բոյս է, որ կարող է աճել թէ
առք և թէ հով տեղերում. բայց հով տեղերում
ցանածը աւելի պուղատու է լինում, գործ է ածու-
ում նոյնպէս պատուց կերակրների մէջ և, սաստիկ
հով լնաւորութիւն ունենալով, շատ գործադրողներին
մնաւ է պատճառում:

Լորին շատ տեսակների է բաժանուում, որոնց
չորսը միայն յիշելու արժանի է. առաջին՝ կալմէլը

լրբի, երկրորդ՝ սպիտակ լրբի. երրորդ՝ սպիտակ սև
 բծերով լրբի և վերջապէս մաշ Ս. աջին երեք սև-
 սակը համով շատ քիչ են զանազանութիւն միմեան-
 ցից. աւելի աչքի ընկնողը նորանց գոյնն է: Մաշը
 թէև պատկանում է լրբու դասակարգին, բայց զանա-
 ջանում է նորանից թէ համով, թէ գունով և թէ
 իւր հատկաների կազմութեամբ: Աորու հատկաները
 բնականապէս լինում են տափարակ, ձուածե, այն ինչ
 մաշն ունենում. համեմատաբար փոքր և բոլորովին
 կոշոր հատկաներ:

Փշոմքար բազալտին եզրագտացորենը կամ ինչ-
 պէս ընդունուած է ասել՝ սիմիոլը, որ Աովկասի
 այլ տեղերում գլխաւոր հացարոյաներից մէկն է
 համարուում և ցանուում է արտերում ահագին տա-
 րածութեան վերայ, նրեանի նահանգում սերմա-
 նուում, առաւելապէս պարտէզներում և բանջարա-
 նոցներում երկաւ նպասակով միայն, առ աջինը, երբ
 հասնելու ժամանակ, սկսում է նա իւր բնի մ.ջ դե-
 ղին գոյն ստանալ, որ չորանալու նշան է, բացում են
 և, կրակի վերայ խորովելով, ուտում են, նախապէս
 խորոված եզրագտացորենը աղաջրի մէջ պցելով. երկ-
 րորդ՝ եզրագտացորենի հատկաները հասած ժամա-
 նակը հաւաքելով պահում են՝ բամբակ բովելու հա-
 մար, այսինքն հասած ժամանակը ալանձում են և
 ուտում: Նեջրագտացորենը թրջած՝ ամենալաւ կերա-

կուր է համարուում տնային թուշունների համար,
բայց նահանգում նորանից օգուտ քայել, ու սովոր
ուեթիւն չէ կղած:

Հայարոյսերի մասին խօսելիս, մուացայ յիշել և
հաճարը, որ բուսնու.Ո, նահանգի սուսեւրապէս հով
և լեռնոտ տեղերում հաճարից հայ չին պատրաստ
տում. նա շատ սննդարար լինելով, գործ է ածուում
միայն կերակրերի մէջ:

Այսպէս եւ մասնացոյց արեցի բոլոր այն բոյսերի
վերայ, որոնք սերմանուումն զաշտերում Յանաճ
տերմերից ստացած արդիւնքի չափը կախուած է
զիւղացու կարծիքով Նախախնամու թիւնից, որ
եթէ բարու թեամբ վերաբերուեց դէպի մարդ, մէկին
հարիւրապատիկ կը վարձատրի. իսկ եթէ աչքը հե-
ռացրեց նորանից, այն ժամանակ նորա սերմանաճը
դուրդուղ չի - գալի ու թուշնի կերակուր կը դառ-
նայ: Բայց թէ զիւղացին իւր աշխատութիւնները
վարձատրուած տեսնելու համար զանազան միջոցներ
գործ դնի դաշտը պարարտացնելու, նա այդ բանի
մասն չէ մտածում: Հողի ոյժը չը կորչելու համար,
նահանգի ժողովուրդը այսպէս է վարուում՝ նա մի
տարուայ ցանած արտը երկրորդ տարում ամուլ է
թողում, որ հողի սպառած նիւթերը կրկին հա-
ւաքուեն: Եւ զիւղացուն ամենւին հասկացնող չըկայ,
թէ նորա անասունների անապատելի աղբը, որ ա-

պակասուամբ կանաչազորից գիւղերի փողոցներն ու
 քնակարանները և գլուանք է պատճառում ամեն մի
 ճանապարհորդի, ամենալաւ տունդ է կազմում դաշ-
 տերի ուժից ընկած հողի համար Գիւղացուն հաս-
 կացնող չք կայ, թէ այդ այբը բովանդակուամբ իւր
 մէջ բոյսն աճեցնելու համար ամենասննդարար մու-
 սեր:

Բայց սորանից՝ դաշտային բոյսերն իրանց նպա-
 տակին ծառայեցնելու համար ժողովուրդը շունի
 հարկաւոր մեքենաներ, բամբակի համար չք կան
 հարկաւոր գործարաններ. իւղարոյսերի համար չք կան
 ճնշող մեքենաներ՝ պրէսաներ. չալթկի համար
 չկան մաքուր բրինձ հանող կատարելագործուած
 գործիքներ ու առանձին հիմնարկութիւններ. բամ-
 բակի համար կան միայն չըլբէններ, իւղարոյսերի
 համար—նահապետական շիւտահաններ, չալթկի հա-
 մար—ճանրաշարժ գնդեր, ցորեն ծեծելու համար—
 ժամանակ խլող կամեր և ջարջատներ և վերջապէս վար-
 անելու համար—եօթ, աւթ լուծ գումշի ոյժ պա-
 հանջող գաւթաններ ու չալթեր:

Բայց կը գայ ժամանակ և այդ շատ հեռու չէ,
 որ աշխատութիւնը կը թեթեւանայ, ժամանակը կը
 կարճանայ, աշխատող ձեռքերը և գործադրուող
 ոյժերը կը պակասեն մեքենաների շնորհիւ. բայց
 մենք վախուճուինք, որ այդ բոլորը լինի մի քանի եւ-

բողոքացու միջոցով. մենք խղճահարու ու մենք մաս-
 ծեղիս, որ այդ ժամանակը, մեր անգէտ, բաղձաշ-
 խատ, ստրկացած զիւղացին ձեռքերը ծալած պիտի
 ապշած նայի օտարի խելքի վերայ և, մի բանի կո-
 պէկ վաստակելու համար, նորից արիւն քրտինք
 մտած աշխատի «յդ օտարի ձեռքի տակ...»

Գ.

Այժմ խաղողի որթը նկարագրել ուզելով, ես նո-
 րան յօդուածիս միջ առանձին բաժին եմ նուի-
 րում այն պատճառով, որ նահանգի ժողովրդի պա-
 րապմունքներից ամենազլխաւորը այդեղործութիւնն
 է կադմում:

Խաղողի որթը Նրեանի նահանգում աւելի մեծ
 խնամատարութիւն է պահանջում, քան թէ մի որ և
 է այլ երկրում: Մովափնեայ տեղերում, ինչպէս օ-
 րինակ Երփին է, ձմեռը մեղմ լինելու պատճառով
 խաղողի որթերը չեն թաղուում, այլ մնումնն բաց
 օդի տակ. բայց այստեղ որթի թաղ'ը և նորից
 բաց անելը ծախսի հետ միացած մի առանձին մեծ
 աշխատութիւն է:

Այդինների առատութիւնը նահանգի միջ տեա-
 նուում, Նրեանի, Նախիջևանի, Շարուրի և մասամբ
 Եջմիածնի գաւառներում:

«Մի քանի տեղեկութիւնների համաձայն՝ Նրեանի նահանգում եղող այգիների տարածութիւնը հասասար է 6,583 դեսետինի, հետեւեալ կարգով. Նրեանի գաւառում — 2890 դես. Աջմիածնի գաւառում — 1239 դես. և Նախիջևանի ու Շարուր — Գարաշահեան գաւառներում — 2454 դես. (Экономические очерки Эриванской губернии. М. Сагателова): Այգիների այս տարածութիւնը իսկականից աւելի քիչ է, գրումէ պ. Սաղաթէլեանցը՝ որովհետև Նրեանի նահանգի հողերի իսկական շափը որոշուած չէ և երկրորդ՝ այս մասին տեղեկութիւններ հաւաքողներն անկարծիք չէին կարող շափել նահանգի բոլոր այգիներն ու պարտեզները » :

9. Սաղաթէլեանցը կարծում, որ նահանգի այգիների տարածութիւնը անպատճառ 10000 դեսետինից աւելի կը լինի: Թէև ես ինքս երկրաչափ չեմ, այնու ամենայնիւ կարող եմ վկայել, որ պարոնի այդ կարծիքը շատ հաւանական է լինելու:

Խաղողի որթերը սովորաբար տնկած են լինում կարգաւ թմրերի մէջ, որոնցից ամեն մէկը ունենումէ հինգ սաժէնի շափ երկայնութիւն և մի արշնի շափ բարձրութիւն ուղղահայեաց գծի երկարութեամբ այնպէս, որ երկու թմրի արանքին մնում է մի բաւականին լայն առու անց ու դարձ անելու և որթերը ջուր խմելու համար: Նրեանու կամ քառասուն թումբը կազմումէ մի տախտակէ հախտակները այգիներում բաժանուումեն միմեանցից մի ջնակով, որոնց մէջ տնկուած են լինում զանազան պտղատու:

Տառեր՝ լնչպէս են՝ ծիրանի, դեղձի, սալորի, խնձորի
 և ուրիշները, որոնք սակաւ ստուեր են արձուկում
 իրանցից։ Բազմաճիւղ և ստուերախիտ ծառերը տնկու-
 ածն են ամբողջաբար այգիների չորս կողմը, որպէս
 զի շուք չանեն խաղողի որթերին, որոնք այդպիսի
 գեղեցիկում ընդունակ չեն լինում բերք տալու։

Տեղական խաղողի տեսակները երկու դասակարգի
 կարելի է բաժանել, առաջինն՝ այնպիսի խաղողներ,
 որոնք մինչև այդեկութն ընկները դործ են դրուում,
 իբրև սեզանի համար գեղատեսիլ և կամ պահուումն
 ձմեռնութիւն և սորանք խաղողների մէջ աղնիւ տե-
 ասակն են կազմում։ Երկրորդ՝ այնպիսի խաղողներ,
 որոնցից զինի է շինուում։ Առաջին դասակարգի խա-
 ղողներն են՝ ասկեարի, բիշիշ, եղանդարի կամ ալա-
 —դեօրմաղ, քեարիմ—դանդի, լիծասպտուկ, հաչա-
 բաշ, մնխալի, սահաբի, լուշի—բարա և շիրշիրայ՝
 երկրորդ դասակարգի խաղողներին պատկանումն
 խարջու, զննազան տեսակ սև խաղողներ, թիւլբի
 դոյրուզի—աղուէսի պոչ—կամ սխապուկ, գառան—
 գմակ և ուրիշները։

Ա. Ասէնարին շուտ հասնող խաղողներից մէկն է.
 ճիւղը երկար, հատիկները սրածայր և բնքոյշ մաշ-
 կով։ խաղողների մէջ բոլորից ջրալի։ Ինքը լուծող
 բնուորութիւն ունի։ Թէև բողբոջութեամբ չէ կա-
 լող մրցիւլբիշմիշի հետ, բայց այնու ամենայնիւ բա-

ւական համով է: Արովհետեւ խաղողի որթերը սո-
 վորարար ընկած են լինում թմբիւրի վերայ, այս
 պատճառով այս խաղողը, յաճախակի կրկնուող
 անձրևներին չը զխմանալով, խոնաւութիւնից հո-
 տում, Այս հանգամանքն ի նկատի ունենալով, այ-
 գեղանները ս.մենից շուտ աշխատում են ասկեարին
 (սչմարել*), յետոյ միս խաղողները Համեմատե-
 լով խաղողի միւս տեսակների հետ, սա շատ ամե-
 նաբերութիւն է:

Բ. Քիշիշը երեք տեսակ է լինում՝ կարմիր, կանաչ
 և դեղնագոյն սպիտակ:

Կարմիր քիշիշը կորզով է լինում. հասած ժամանակ
 կարմրում է և հետզհետէ քաղցրանում: Չիթը հա-
 ւաք է. հասիկները իրար սեղմուած մինչև այն աս-
 սիճան, որ դորանք շատ անգամ կորցնում են իրանց
 կոլորութիւնը և ստանում զանազան ձևեր: Կանաչ
 բիշիշը նոյնպէս կորզով է լինում և ունի նոյն
 իսկ կարմիր բիշիշի յասկութիւնը: Արթի թփերը
 շատ լայն են և կանաչ: Դեղնագոյն սպիտակ բիշիշը
 դերադաս է առաջին երկու տեսակից, որովհետեւ

(*) Իչմարելն այն գործողութիւնն է, որ խաղողները
 նսր հասած ժամանակ, ծառի ճիւղերից պատրաստած նե-
 ցուկներ են տալիս ամեն մի խաղողի տաշնակի տակ, ող-
 կոյղները հոտելուց ազատ պահելու համար:

ու՛նի ահադին ճյւթեր, մինչև կէս արշին երկայնու-
թեամբ, և համեմատաբար մեծ մեծ հատիկներ.
համով աւելի քաղցր է, քան թէ բիշմիշի միս տե-
ռակները Ամենապատուական, դեղնագոյն չամիչը, որ
դործ է դրուում թէ կերակրների մէջ և թէ իբրև
միտք, պատրաստուած է այս տեսակից: Դեղնագոյն
սպիտակ բիշմիշի թփերն իսկոյն աչքի են ընկնում
իրանց լայնութեամբ, մեծ դիրքով և դեղին գոյնով:

Գ. Եղանդարին և քեարիճ—դանդին ամենաքաղցր և
ամենաշուտ համուղ խաղողներն են. բայց վերջինն
աւելի ևս շուտ է համուում առաջինից: Այս խա-
ղողները հազիւ թէ ճնումեն մինչև այգեկութ և
շուտով ուտուումեն, իբրև վաղահամներ. այս պատ-
ճառով այգեպանները եղանդարուն տուել են աղա-
գեօրմազ անունը, որ նշանակուած է այգետիրոջ հա-
մար անտեսանելի:

Դ. Իծապարուէն, ստացել է իւր անունն այն պատ-
ճառով, որ նորա հատիկները իրանց երկար դիր-
քով և հաստութեամբ նմանուումեն այժի պտուկնե-
րին, բաւականին քաղցր է և հիւթալի. բայց փոքու-
րէ, այսինքն զուրկ է այն յատկութիւնից, որով կա-
լող էր մրցել բոլոր խաղողների հետ: Զիւթը բիշ-
միշի ճիւղի նման երկար է լինում. իսկ վրայի հա-
տիկները ցանցառ:

Ե. Հուչա - Բաշն իւր հատիկների արտաքին կազմու-

Թեա մը բիչ թէ շատ սրտի նմանութիւն ունի այն
 դանազանութեամբ միայն, որ այս խաղողի թէ ծայ-
 րը և թէ կոթը մի հաստութեան է: Երանք հա-
 տկները մ. ծ մեծ են. բայց ոչ այնքան ջրալի և
 համով: Մաշկը բարակ է, ձիւթը մեծ. բայց ոչ
 երկայն և ոչ կոշոր դիրքով, այլ միջակ: Այս խա-
 ղողը պահանջներին մէկն է և շատ լաւ դիմանումէ
 ձմեռը՝ մինչև հետեւող տարուայ Յունուար և
 Փետրուար ամիսը. համարեա ունենումէ նոյն անարա-
 ստութիւնն, ինչ որ քաղկու ժամանակ: Գոյնը սո-
 վորարար կանաչ է. բայց խիստ արևի տակ եղած
 ժամանակ մաշկը սասնումէ մոյգ—դեղին գոյն և
 փայլումէ:

Զ. Մսխալա հատիկները մի մի գնդակներ են եր-
 բեմն ապակու նման թափանձիկ և երբեմն բարակ,
 հասարակ աչքով համարեա անտեսանելի սպիտակ
 փոշով պատած: Զիւթը բաւական երկար է և ցան-
 ցառ հատիկներով, ջուրի բողջը համ. բայց սխոր-
 ժելի է: Հաստ մաշկ ունենալով և շատ ջրալի չը-
 լինելով, պահուումէ ամբողջ ձմեռը առանց հոտելու:

Է. Սահաբին ձուածու է. հատիկները կէս—վարդա-
 գոյն ներկուած, մաշկը շատ նուրբ և առամների
 տակ փուխը ոչ այրող—բողջը է համով և ոչ շատ
 ջրահամ: Թուփը կանաչ է և լայն տերեւներ ունի:

Ը. Երբեքս կոչուած խաղողի տեսակը լինումէ

բաւական մեծ մեծ հասիկներով, որոնք շատ հաստ
մաշկ և մոյզ—դեղին գոյն ունեն: Նիրշիւրան այնքան
շիրալի չէ և բայի կախանացու լինելուց գործ է
դրուում և այն բանի համար, որ նորանից դաքնու
տերեւներով և դօշաբով — խաղողի եփած ու թանձ-
րացրած քաղցրով — պատրաստումեն բղիների մէջ
մի տեսակ պատուական խաղոլաթթու սեւա՛ւի վե-
րայ գործ ածելու համար:

Խաղողի վերայիշուած բոլոր տեսակներն այգի կու-
թին քաղումեն և ճիւթերն ընայուածեան, դաւար
ճիւղերի վերայ կախան անելով, պահումեն, իբրև
ձմեռուայ սանալաւ թայ միրգ: Նորանց վատ
ճթերն, որոնք պատա շմուխ կարկտահար, ցխտուած
կամ հոտած են լինում, հասարակ խաղողի հետ
խառը, ձմեռում, շիրայ քաղցու—են շինում գինու
համար:

Նրկտրոյ դասակարգի խաղողներն խարջուան ամե-
նալու տեսակն է գինու համար. որովհետև չափու-
ցանց շիրալի (հիւթալի) է և երբեմն շատ քաղցր-
ունի բաւականին տուղ — լիքը, պարսրտ—ճիւթ
և կոլոր, հիւթալի, համով հասիկներս Ա. անց չու-
փազանցութիւն անելու կարելի է ասել, որ խար-
ջուի մի լաւ ճթից կարելի է մի թէյի բուժակ շի-
րայ քամել և, համարում, տեղի: Այգիներն առա-
ւելապէս անկուած են լինում այս խաղողի սուշնակ-

ներով — որթ երով — :

Գասան — գ. հակը խարջուի նամանութիւն ունի. գա-
նազանուումէ իւր մաշկի նրբութեամբ և հասիկ-
ների միջի եղած կորիզների սակաւաթուութեամբ
Սորա թփերը, որոնք խարջուի թփերին նամանու-
թիւն ունեն, զանազանուումեն վերջիններից իրանց
սուելի լայնութեամբ, քնքոյշ կազմուածքով և վեր-
ջապէս ճիւղերի հասիկները, խարջուի նաման, սեղ-
մուած չեն միմեանց հետ, այլ, ընդհակառակն,
բնկած են մէկ մէկուց բաւական հետու:

Թիւշի — զոյրուղին (աղուէսի պոչը) կամ սխառուկն
սասցել է իւր անուընը նորա համար, որ նորա եր-
բեմն մեծ և երբեմն փոքր հասիկները աղուէսի պո-
չի նաման երկայն են և մաշկը ծածկուած է կարմիր
բծերով: Սորա ճիւղին ևս հասիկների նաման երկար
ձև ունի:

Ան խաղողը բաժանուումէ շատ տեսակների, որոնք
շատ քիչ յայտնի են սուանձին առանձին անուանե-
րով: Այնու ամենայնիւ, նշանաւոր են՝ սև — ուր-
գայ, դարս — շահանի և եզան — աչք սև խա-
ղողները: Նպան աչքը չափազանց մեծ մեծ է լի-
նում կլորակ հոտիկներով, սաստիկ հիւթալի և
քաղցր: Թուփը, դեղին և լայն տերևներ ունենա-
լով, նամանումէ դեղնագոյն սպիտակ քիչ միշտ թփին:

Սորանով վերջանումէ խաղողի բոլոր տեսակների

Նկարագրութիւնը

Աթէ ուղէի մի առ մի պատմել բոլոր այն սովորութիւնների մասին, որոնց համեմատ վարուումներ տեղական այգեգործները, սկսելի նկարագրել այն եղանակների ու ձևերի մասին, որոնք գործ են դրուում գինի պատրաստելու միջոցին, ինչ շատ հեռու կը տանէր յօդուածիս մտքից և նպատակից. այս պատճառաւ ես գինեգ բծու թիանս վերաբերեալ մի քանի նկատողութիւններով, կարծեմ բաւականացրած կը լինեմ ընթերցողներիս:

Կուսաւորեալ աշխարհում ընդհանրապէս կովկասի գինին, բացի լաւ Կախէթու գինուց, վատ անուն է ժառանգել: Ուրեմն մասնաւորապէս անուշիտան է համարուում և Նրեանի նահանգի գինին: Բայց հաստատ կարելի է ասել, որ եթէ տեղական ժողովրդի այգեգործ և գինեգործ դասակարգը նոյն նահապետից կտակած սովորութիւններից փոքր ինչ հեռանալ գինի պատրաստելու վերաբերութեամբ, այն ժամանակ այդ խմիչքը լաւ անուն կտանալ և երեք կամ աւելի անգամ կը վաճառահամուէր, քան թէ այժմ է:

Իսկ այժմ եթէ հաշուենք, որ ստբողջ նահանգում տասն հազար դեսեառին հող է պարտաւորած այգիների համար և ամեն մի դեսեառինից իւրաքանչիւր տարի միջին թւով ստացուում է 250

մանէթ, կլիմանք, որ 2,500,000 մանէթ արդիւնք,
 և ապիս զինեզործութիւնը նահանգի ժողովրդին

Կինի պատրաստելու և նորա վերայ հսկելու վերաբերութեամբ երեք գլխաւոր պահասութիւն է նկատուում ժողովրդի մէջ. առաջինը՝ որ Վսաղողները քաղելիս, ամենեւին ընտրութիւն չէ լինում նորանց մէջ, տեսակները չեն բաժանուում, հասած խաղողը, առողջ խաղողի հետ խառը տրորուում և սասցած քաղցուն լցուում կարասների մէջ, երկրորդ՝ մաքրութիւն չէ պահպանուում խաղողը տրորելում և բոլոր այն ժամանակամիջոցում, երբ զինին կարողանում և վերջապէս հասնել իւր կատարեալ հասունութեանը. և երրորդ՝ զինին, զինեզործների անհոգութեան շնորհիւ, շատ անգամ ենթարկուում օդի ազդեցութեանը և հետեապէս քացախում:

Այս երեք, ինչպէս ասացի, գլխաւոր պատճառն ի նկատի ունենալով, ես խորհուրդ կը տայի, որ՝ առաջինը, զինու համար նշանակուած խաղողի տեսակները բաժանուէին, երկրորդ՝ չափազանց մաքրութիւն պահպանուէր այդ հեղուկի հետ և վերջապէս աշխատութիւն և ուշադրութիւն դարձնուէր հետո սահել զինին օդի ազդեցութիւնից:

Այս առ այժմ մեզ բաւական կը լինէր, մինչև որ կունենայինք, մասնագէտ զինեզործներ, որոնք

հետազոտելով երկիրը և նորանկից դուրս եկող ամենազնվե խաղողները, ցոյց կը տային փորձով, որ արդարև մեր երկիրը երկրային դրախտ և նորա միջի գինին, ոչ թէ հասարակ արրեցնող հեղուկ, այլ կատարեալ նեկտար է:

Գ.

Այժմ ես դատնումեմ դէպի խոտերն ու ծաղիկները, նկարագրելով բանջարանոցի կանաչեղէններից սկսած մինչև դաշտային և լեռնային խոտերի ամենամանր տեսակները, ի հարկէ, այն չափով, որքան ինձ յայտնի է:

Բանջարանոցի բոյսեր:

Նահանգում զանուկող բանջարանոցի բոյսերը 40—50 տեսակից աւելի չեն:

Ա. ¹ Կաղամբ, brassica *), բանջարանոցի ամենարդիւնաւոր բոյսերից մէկն է համարուում, միայն նա աւելի խնամատարութիւն է պահանջում: Գըլ խաւորապէս դուրս է գալիս Աղէքսանդրապօլի և Նեանի դաւառներում: Վերջին տարիներում կաղամբը

(*) Մենք հարկաւոր համարեցինք դնել այստեղ բոյսերի լատինական յայտնի անունները:

անդամախուսած է ե նոր - Բայազիդի դաւանն, որ
 շատ աստուծեամբ և յաջողութեամբ դուրս գա-
 լիս և ամանն գնով ծախուումէ, Բժշկական կէտից
 նայելով կազամբի վերայ, պէտքէ ասել, որ նորա
 ասել եները թարմ ժամանակ վերքերի շարաւը կամ
 կամ թարախը դուրս քաշելու յատկութիւն ունեն
 Այս պատճառով մարդկ երբեմն վիրաւորուածին
 օգնելու համար օգուտ են քաղում կազամբի այդ
 յատկութիւնից:

Բ. Բողկը լինումէ ամսական և տարեկան Ամսա-
 կան համարուումէ նա, որ դարձանից սկսած մինչև
 աշուն ցանուումէ, ինչ ամսում պատահի իսկ տա-
 րեկանը նա է, որ ցանուումէ ամսուուայ կիսին. սա
 մինչև աշնան ցրտերն ընկնելը բաւական հաստ ար-
 մասներ է բռնում, որոնք հողի տակից դուրս են
 հանուում և պահուում ձմեռուայ համար Բողկը
 նայելով թէ ինչ որակութեան հողի մէջ է ցա-
 նուած եղել և որքան ջուր խմել, լինումէ կամ
 քաղցր, ջրահամ ու անոյշ և կամ սաստիկ կծու
 Վան երեք գոյնի բողկեր՝ սև, սպիտակ և կարմիր: Սո-
 րանցից առաջինը երբեմն գործ է ածուում իբրև
 դիւր: Դեղնութիւն ստացած մարդուն, որի փորում
 ծիւծու է լինում, տնային բժիշկները խամ մեղրը
 և բողկի հետ աալիս են, ուտումէ և երբեմն ցա-
 ճից ազատուումէ:

Գ. Գազարը կամ սպեպլինը, capota այն բոյսերին է պատկանում, որոնց արմատը գործ են դնում ոչ միայն կերակրների մէջ, այլ նաև իբրև միւրգ, որ աշանը քանի մնումէ հողի մէջ և «ցուրտ է ուտում», այնքան աւելի է քաղցրանում: Գազարը սոխորաբար կարմիր գոյն է ունենում, բայց պատահում է նոյնպէս դեղին, սպիտակ և կապոյտ գոյներով: Սերմը հոտաւէտ է և կծու համ ունի. հարկ եղած ժամանակ վերքերի համար սորանից դեղ է շինուում: Նոյն իսկ բոյսի տերեւները դեղ են համարուում միզարդելութեան դէմ:

Դ. Բազուկը, betha, այն կանաչիներիցն է, որի թէ թուփը և թէ արմատը գործ են դրուում կերակրների մէջ: Պարսիկները սորա արմատը խաշումեն և կթոցների մէջ լցրած, ծախումեն լաբլաբի անուանով փողոցներում և բաղնիքների դռներին: Բազկի քաղցրութիւնն ու անհամութիւնը կախուած է նորանից, թէ երբ է նա հողից դուրս հանուել. եթէ ուշ քաղցր է լինում. իսկ եթէ շուտ՝ անհամ: Այս բոյսը մեղմացուցիչ բնութիւն ունենալով, բաւականին օգտաւէտ դեղ է համարուում թոքախտութեան և հնացած հազի դէմ:

Ե. Կարբոֆէլը դուրս է գալիս առաւելապէս Նորբայազէտի և մասամբ Եջմիածնի ու այլ գաւառներում: Երբեմն սորա համար ահագին արտեր են պա-

բայնցնում դաշտերում Ամենապատուական կարսո-
ֆէյը դուրս է դալիս Սիմէօնովկա դիւղում, Սեանայ
լճի հիւսիս—արեւմտեան կողմը:

Զ. Գեփնախնչորը կարսօֆէյի նման արմատ է միայն
քաղցր համով: Այդ բոյի կարսօֆէյի նման ար-
մատները, որոնք կարմիր մաշկ ունեն, ծածկուած
են կոկոմների ձևի աչքերով և այդ աչքերը պէտք
են դալիս սերմի տեղ, երբ մարդիկ ուղում են ցա-
նել նորանից բանջարանուցներում: Գեփնախնչորի
հողի երեսից արձակած ցօղունն ու տերևները բա-
ւականաչափ բարձրանում են. իսկ կարսօֆէյի տե-
րևները ընդհակառակը պարկած են լինում հողի
վերայ:

Է. Ախը առատութեամբ դուրս է դալիս Արարա-
տեան դաշտում: Սորա մի տեսակը յայտնի է բա-
լէշ անունով, որ ունենում է մանր ու երկարաձիգ
դուլիս և հաստ պարանոց ու քաղցր, աւելի լաւ է
ասել, թոյլ-կծու համ: Սոխի այս տեսակը երկար
ձողերի վերայ ձգած պահում են ձմեռը հացով ու-
տելու համար: (Սոխ ու հաց-սիրտը բոց): Հասա-
րակ սոխը, որ երբեմն լինում է խիստ կծու կամ
ջրահամ, դուլխներով դուրծ է դրում ամենայն
տեսակ կերակրների մէջ:

Ը. Ախորը, allium, բարակ և երկար տերևնե-
րով կանաչի է և հողի սակ ձգում է, սոխի նման,

արմատ, որ լւր մէջ ունենումէ իրար հետ կ'ըլլած
 մի քանի պ'իւղ: Գործածութեան մէջ սխտորի ա-
 ռաւելապէս արմատն է հարկաւորում: Թէև նորա
 հոտն ամենանուրիան է և գործ անելի մար-
 դու բերնից գարշելի հոտ է բուրում, որ դըլուկի է
 թուում ամեն մի պատուաւոր հասարակութեան
 մէջ, այնու ամենայնիւ նա դարձեալ գործ է դը-
 բում իւղալի կերակրելի մէջ, որովհետև բաւա-
 կանիւն մարտեցնող բնութիւնն ունի և օգնումէ ըս-
 տամոքսի տկարութեանը:

Թ. Պատար, porrum, արտաքին ձևով, այսինքն
 անբնական կազմութեամբ, բաւականաչափ նման է
 սխտորին. բայց զանազանումէ նորանով, որ սա
 հաստ ու կողր արմատներ չէ արձակում, այլ ունի
 այն յատկութիւնը, որ իւրաքանչիւր անդամ հըն-
 ձելուց յետոյ, նորից անելի թարմ ու դալար տե-
 բներ է արձակում և սորանք են միայն հարկաւոր-
 ւում ուտելու համար: Պատար սերմը, որ երկայնածե-
 է, գործ է դըրում իբրև դեղ ատամների ցուելի
 դէմ:

Ժ. և ԺԱ. Հաճեմ ու Տաղարիտայ որ ըստինքէն
 կոչումէ petrozelina, շատ նման են միմեանց. մի-
 այն առաջինը երկրորդից զանազանումէ, իւր ա-
 ռատ անոյշ հոտով ու համով: Երկուսն, ևս առող-
 ջարար կանաչի են համարում, մանաւանդ երկ-

բորդը: Համեմբ գործ է դրուում միայն կերակրանքի մէջ. իսկ մաղաղխնոսն ուտուումէ հաց ու պանքի հետ:

ԺԲ. Ռեհանը, basilicum, շատ հոտաւետ և ս խորժելի կանաչի է: Մեր հայերիս մէջ կան շատ կանաչք, որոնք այս կանաչու անունով են կոչուում: Բոյսի տերեւները գործ են դրուում խոհանոցում ինչպէս թաց, նոյնպէս և չորացրած ժամանակ:

ԺԳ. Կոսեճը, nasturtium, շատ օգտակար կանաչիներից մէկն է արիւն հտտակելու համար: Գործ է դրուում սեղանի վերայ հացի հետ:

ԺԴ. Կոռնիկն, ինչպէս և ուհանը, հոտաւետ է, զանազանուումէ նորանից իւր տերեւների երկայն ձևով և կանաչութեամբ: Ինչպէս յայտնի է, ուհանը ունի աւելի լայն տերեւներ և նորա ցողունը կարմրագոյն է: Կոռթինը գործ էր դրուում կեկրաների մէջ:

ԺԵ. Թարխուանը, թէև շատերի համար սիրելի, բայց օգտակար կանաչի չէ. համը կծու է. գործ է դրուում հացի, մանաւանդ թերխաշ ձուի հետ:

ԺԶ. Նեխուրը, apium, տերեւների կազմութեամբ նմանումէ մաղաղխնոսին. միայն առաջինի տերեւներն աւելի լայն են լինում և աւելի մեծանալու ընդունակ: Սա գործ է դրուում գլխաւորապէս թթու բռնելու համար: Վերքերի դէմ օգտակար է և ցրու-

ուսկ, կրծքում եղող խուխը (բղձամբ) և ունի միջև-
ցնող բնաւորութիւն:

ԺԷ. Առօքն, anetum, պարարտ, փափուկ, անու-
շահոտ և քաղցրահամ կանաչի է, մաղանման տե-
րեւերով: Ծաղիկները դուրս են դալիս հովանոցի ձե-
ւով ոստերի գաղաթներին և ունեն զեղին գոյ՛ւ ու
խրաքանչիւրը հինգ հինգ թերթ: Աամիթը ծաղ-
կելուց յետոյ ապիս է փոքրիկ հատիկներ կամ պը-
տուղներ և նորանցից խրաքանչիւրը ունենում, եր-
կու երկու ձուռաձե տափարակ և տապահամ սերմ,
որ գործ է ածուում իբրև դեղ կաթը գրգռելու և
փախումը դադարեցնելու համար:

ԺԸ. Անանուխ, mentha, գաղձի մի տեսակն է և
չափազանց հոտաւետ: Բոյսի ճիւղալից ցողունը եր-
կու երեք ոտի չափ բարձրութիւն ունի: Տերեւները
երկայն են, խիտ, ծայրաւոր, թաւա՛նաղ, մթին կա-
նաչ և կողքերը սղոցածև առամներով: Ծաղիկները
մանր են և երկայնա՛ն. արմատը երկայն է և թե-
լաւորուած: Անանուխը բժշկականութեան մէջ յայտ-
նի դեղ է ջղային հիւանդութիւնների դէմ. ինչպէ՛ս
են՝ ստամոքսի տկարութիւնը, փախողականութիւնը
ևն: Այս իսկ հիւանդութիւնների առաջն տանելու
համար պարաստուումն անանուխից զանազան
յատկութիւնների առողջարար կաթիլներ:

ԺԹ. Պալեանջը, որ նոյնպէ կոչուումէ վարդապե-

տի-կանաչի, համեզ կանաչներէն մի ն է և ունի սղոյաձև եղըներով տերւեներ ու կարգապայտն ծաղիկներ: Բնութեամբ այս բոյսը ջերմ է և ստամոքսի դժ սոււող:

Սալախը lactuca, լայնատերև դեղնախառն-կանաչ գոյնով կանաչի է, որ փնջաձև դուրս է դալիս հողից և առնուին չէ բարձրանում: Սա դործադրութեան մէջ չափազանց հարկաւորումէ խորովածի հետ շաքարով ու քացախով:

Բացի վերոյիշեալ կանաչներէն բանջարանոցներում ցանուումեն կարմիր տաղանդ (պղպեղ) սև պօրինջան, կարմիր կամ յորմած-պօրինջան, շաղգամ, դեանախնձոր, բազլայ, դդում, որ լինումէ երեք տեսակ ուտելու, սուրասի և ընդեղէններէ:

Ուտելու դդմենին ունի շատ լայն տերւեներ: Սա նոյնպէս ունի մի քանի տեսակներ, որոնք միմեանցից զանազանուումեն իրանց գոյներով և կեղևի կազմութեամբ: Բացի կերակրների մէջ դործադրուելուց, սա պէտքէ դալիս տեղացի ժողովրդին և մի տեսակ քաղցրաւենի շինելու համար, որ կոշուումէ ու աւալ Բաշալը դօշաբով (կփած քաղցուով) և դդմով եփած այն ուրաբայն է, որով աղքատ դատակարգի ընտանիքները պատուասիրումեն իրանց հիւրերին:

Սուրասի դդմենու համար անկումեն ձողեր, որոնց վերայ նա բարձրանում, ծաղկում և երկայն կոթե-

րով դդուճներ է տալիս. Այսպիսի դդուճները տե-
ղական ժողովրդի մ.տ մի այն մի նպատակի համար
են ծառայում այն է, որ այդուհետքը շինում են
նորանցից գեօդրաններ կարասներից գինի հանե-
լու համար և կամ ձողար տկերի մէջ օղի բացախ
կամ գինի լցնելու գիտաւորութեամբ:

Ընդեղէնների դդուճների կոթերը ողորկ և ամ-
բողջապէս միահաւասար հաստւթիւն չեն ունե-
նում, այլ նորանց միջի մասը աւելի փքուած է լի-
նում Ինքը դդուճը լինում, սուրահի դդմի հակա-
ռակ շափաղանց մանր և միայն գործ է դրուում
մէջը սերմեր և այլ համեմունք ամելու համար:

Մտացայ յիշի, որ բաջարանոցներում դուրս է
դալիս և բաժիս, որի տերեւները շատ նման են խա-
ղողի թփերին, իսկ պտուղը կարելի է համեմատել
դասական մանր, սուր դադաթներս / պիտ ամիդա-
նեքիս Այդ պտուղը շատ լպրծուն հիւթ ունի և
գործ է դրուում միայն դալար ժամանակ կերակր-
ների մէջ, բանի որ նորա սերմը և կճեպը չորա-
ցած չեն լինում: Սերմը, որի համար ասոցի, լի-
նումէ մանր, կոլոր և սև, պտղի երկարութեամբ մի
բանի դաս շարուած: Ամենալա բաժիս դուրս է դա-
լիս Վաղարշապատ գիւղում, ուր դանուումէ մեր
հայերիս սիրտը՝ Եջմիածինը:

Վերջացնելով բաժարանոցի բոյսերի կարճաւոր

աւտուժիւնը, եւ անյնուամեմ այժմ սեխանոցի կամ
բօսանի նկարադրութեանը:

Դ.

Սեխանոցի Բոյսեր:

Սեխանոցում ցանուումեն միայն՝ սեխ, ձմերուկ եւ
մառունգ:

Սեխը մի քանի տեսակ է լինում՝ ա. շալախ, Բ.
դօտտիջան, Գ. ջառ-ջառ, Դ. սնէյվաղ, Ե. դըղըլ-
բուռնի, կամ բուղղէյի, Ղ. Հասան-բէկի, Կ. ալաեմիշ,
Ը. գարա-եմիշ (սե-սեխ). Թ. Խորասանի-սեխ եւ Ժ.
գուժմա:

Ա. Շալախն արտաքին կաղմութեամբ նմանումէ ասի-
ական մութաքիւնքին: Հողի որակութեանը նայած,
նա երբեմն շատ մեծ, համարեա՛, մի փոքրիկ մանկան
չափ: Շալախի թէ կեղևը (կէպը, մաշկը) եւ թէ
միջուկը հասած ժամանակ ստանումէ զուտ դեղին
գոյն. համով այնքան քաղցր չէ. բայց չափազանց
ջրալի է եւ փոփուկ, այնպէս որ ստացել է «ծերու-
նի—անատամների» միրգ անունը:

Բ. Դօտտիջանը շալախից փոքր է եւ ունի կանաչ
մաշկ երփներանդ շերտերով, որոնք ընկած են լի-
նում ուղիղ դժով գլխից մինչև կոթը: Հասած մի-
ջոցին բաւականին քաղցր է:

Դ. Ձառաջուք լինումէ մեծութեամբ դօստիջանի շախ, կանաչ գոյնով և ծածկուած է մանր սպիտակ շեւտերով: Համով ուկի քաղցր է դօստիջանից: Սոսա դլխաւոր յատկութիւններից մէկն այն է, որ դանակով կտրելու ժամանակ առանց աշխատութեան ինքն իրեն ճեղքուումէ: Աշնան գիշերուայ լստերին ջառ ջառներից շտտերը և մասամբ դօստիջանները սեխանոցներում պտտառուտում են և գոյացած ճեղքերը վերքերի նման ծածկուումեն շարարային հիւթով:

Դ. Սնկյճաղը, դըշըշ—բուռնին կամ բուդդեյին, հոսան—բէին, ալեմշը, գարա—եմշը և խորասանի—ոելը յայտնի են իրանց հաստ ու կարծր կաշուով, սկինդ մսով և համեղութեամբ, հասնումեն շտտ ուշ և մինչև ձմեռուայ կէսը պահուումեն իբրև թաց միրգ: Գլխաւոր յատկութիւնն այս սեխերի այն է, որ կորիզը մնից կպած է լինում:

Ն. Դաւթման սեխերի մէջ ամենազնիւ տեսակն է: Ինչ համեմատութիւն որ կայ աղջանաբաթի և հասարակ դառն ծիրանի մէջ, նոյնը կարելի է ասել և դութմի ու շալախի վերաբերութեամբ: Դութմի վորքերը, խակերը կոչուումեն դուա, որոնք պատուական համ ունենալով, ասորիժակով ուտուումեն. բայց ընդհակառակն եմիշը խակ ժամանակ, դառն կորից ունենալով, չէ ուտուում: Սեխը ու դութ-

ման իրանց թփերից խկոյն կարելի է զանազանել .
 վերջինի թփերը համեմատաբար աւելի փարթամ
 են լինում և թաղերից դուրս դցած ճիւղերը աւելի
 հաստ և զուարթ :

Կոթման մեծ խնամատարութիւն և փորձառու
 թիւն է պահանջում և ամենայն դիւղացի այս
 պատճառով չէ կարող դուրսնայ բուսցնել : Կորս
 համար պէտքէ վարպետ լինել : Մեզ մտա տմենա-
 շաւ ու հմուտ վարպետները սեխանոց պահելու վե-
 րաբերութեամբ դալիս են Պարսկաստանից : Գլխաւոր
 վարպետութիւնը դուրսնա պատրաստելում այն է,
 որ պէտքէ խմանալ դուրսնանոցը ջրելու ժամանակը ,
 նաև այն՝ թէ զուաներից որ մինը պէտք է թաղել
 հողի տակ և ի՞նչ ժամանակ դուրս հանել այնտե-
 րից, որ դուրսնան լինի մեծ, հիւթալի, քաղցր և
 փուխր :

Ամենաշաւ սեխանոցները նահանգում լինում են
 Արարատեան դաւառումն Երբեմն դուրսնի բոտանի-
 ները այնչափ լաւ են դուրս դալիս, որ նորանց տե-
 րերը ծախում են մի անգամից ութ հարիւր, հազար
 մանէթի : Դուրսնան ուրեմն ամենարդիւնաւոր բեր-
 քն է սեխանոցի բոյսերի մէջ : Նա նահանգից դուրս
 է տարուում մինչև անգամ շատ հեռու տեղեր և
 ծախում թանգ դներով : Սեխը, որից ամառ ժա-
 մանակ ամեն առաւօտ հարիւր սայլ մանուկէ քա-

դար, բայցի քաղաքացիներին բուռականացնելուց, Կու-
րքս է տարուում դէպի սարերն ու ամարան ցները
և ցրուում լեռնաբնակների մէջ թէ փողով և թէ
պանրով, խղով և լն:

Ձմերկի տեսակները երկու են՝ պահուելի և
հասարակ ձմերուկ:

Ա. Պահուելին ունի հաստ կեղև, հրդեմն փեղին
և երբեմն կարմիր միջուկ: Ձևը երկար է, կեղևն ու-
նի շերտեր, միջօրէական գծերի նմանութեամբ. պա-
հուումէ շատ երկար, համարեա՛ ամբողջ ձմերուկ:

Միւս հատորակ ձմերուկը, բարակ մաշկ ունենա-
լով, քնդունակ չէ ժամանակի հոսանքին փոխանա-
լու: Սորա արտաքին ձևը բոլորովին նման է գնտակի:
և բաժանուումէ մի քանի տեսակի թէ արտաքին ու-
ներքին պոյնով և թէ միջուկի յատկութիւններով:
Ձմերուկն այն թաց մրգերիցն է, որի շատ քործա-
ծութիւնը հազիւ կարողանայ մարդու մնասել, իսկ
սեխը, զլխաւորապէս սորա շալախ տեսակը, տաք-
բնաւորութիւն ունենալով և պարունակելով խը-
մէջ մտղձալի հիւթեր, առաջացնումէ ջերմ:

Ա. յս հիւանդու թեանն ամառը երթարկու ումնն զըլ-
խաւորապէս այլ քառ պարսիկ մշակները, որովհետև
սեխը, հացից աժանն լինելով, միշտ քործապրու-
թեան մէջ է լինում նորանց մօտ:

Թէ համով ու քաղցր ու՛րեամբ և թէ ահազին

մեծութեամբ ամենայնաւ ձմերուկներ դուրս են դա-
լիս Արարատեան դաւառի Մայրբլու և Չիղամլու
զիւղերում և ընդհանրապէս Նրասխի օփերին կից
հողերի վերայ:

Վարունդի երկու տեսակն է բուսնում նահանգի
մէջ: Մի տեսակը լինումէ կանաչ դոյնով, երկայն,
երբեմն շատ մեծ—մեծ և նորա թաղերը պարկած
են լինում առաջուց պատրաստած թմբերի վերայ.
Իսկ միւս տեսակը, պատտակի նման, բարձրանումէ
տնկոտած ջախչերի—ձողերի—վերայ և նորա վա-
րունդը լինումէ մանր, սպիտակ դոյնով և թեթեւ
փշոտ մաշկով:

Առաջին տեսակը վարունդի բուսնումէ, համարեա՛,
ամեն տեղ, բայց նահանգի լեռնային տեղերից՝
իսկ երկրորդը՝ Ադուլիսում: Վարունդը բայց սեղանի
վերայ դործ ածելուց թթու է դրուում ու պա-
սուց և ուտուց կերակրների հետ ուտուում: Նա
ախորժելի է մանաւանդ խորովածի և այլ իւղալի
կերակրների հետ:

Կայ վարունդի և մի երրորդ տեսակը, որից նա-
հանդում սկսել են ցանուկ այս վերջին տարիներում:
Նա գոյնով և մաշկով շատ նման է դուայի, իսկ
շատ երկայն ձևով տարբերուումէ նորանից. ունի
երբեմն 10—12 վերջոկ և աւելի երկայնութիւն:

Օ.

Մ ա ղ ի չ ն է ը :

Երևանի նահանգում աճող ծաղիկները կարելի է
երկու դասակարգի բաժանել. առաջինը՝ ընտանի
ծաղիկների և երկրորդ՝ վայրի ծաղիկների:

Ընտանի ծաղիկները, որոնք բուսնումն աճն
մի ծաղկասեր մարդու բուրաստանում, հետևեալներն
են՝ ա. Վարդ. բ. Նուսուֆար. գ. Ղարաֆիլ. զ. Գիւլի-
Սարահի այսինքն առաւօտածաղիկ. է. Մախմուր - ծա-
ղիկ. զ. Թոփ - ծաղիկ. է. Հինի - ծաղիկ. ը. Սարդարի -
ծաղիկ. ը. Երամ. զ. Շաբօ. զա. Աքլորակատար.
զբ. Գեօրգեօրի. զգ. Նամանի, որ նոյն է՝ յասֆիկ.
զդ. Նարդիլ . զէ. Սուսամբար. զզ. Զամբեղ . զէ. Խա-
թուն սալանմա. զը. Վարմիր տուղտ. զը. Գաթի -
ծաղիկ. և ի. Խաշխաշի - ծաղիկ:

Ա. Վարդը՝ քնքշութեան այդ օրինակը (ЭМБЛИОМА
НѢЖНОСТИ) ծաղիկների թաղուհին է համարուում
և այնքան ընդհանրացած ու յայտնի է ամենքին, որ ևս
աւելորդ եմ համարում խօսել նորա մասին: Աս այդ պէս
կը վարուեմ և միւս ծաղիկների վերաբերութեամբ՝
Վարդի նկարագրութիւնը մի կողմը թողնելով, այս
պէտքէ ասել, որ ամենահին ինքնուս բանաստեղծ-

ներից սկսած մինչև մեր ժամանակուայ ամենամտր
 զխնական բանահիւաները իրանց սիրահարական
 սառարկայի յատկութիւնները նկարագրելիս, համե-
 մատումեն նորան վարդի կարմրութեան, նորա քրն-
 քշութեան, փափկութեան, կազմուածքի վայելչու-
 թեան, անհասական բուրմունքի և այլ արժանաւո-
 բութիւնների հետ:

Բ. Նուսուֆարը, nenufarium, պատասկի յատ-
 կութիւն ունի. այսինքն՝ ինչ ծառի կամ բոյսի ու-
 ձողի մօտ լինի, կը փաթաթուի նորան և ճիւղա-
 տրուելով կը հասնի մինչև մի տան բարձրութեան,
 նորա տերեւները լայն և կոշոր են. ծայրի մօտ փոքր
 ինչ սրուած, թունդ կանաչ դունով. իսկ բոլորակ,
 ձաղարի նման կապոյտ դեղեցկատեսիլ ծաղիկներն
 առաւօտեան այդի ժամանակ և արևը մտնելու մի-
 ջոցին բացուումեն ու խիտա ճառագայթներից թալ-
 շամում: Ծաղ կի սերմերը պատասպարուած են լինում
 կ ըր բների մէջ, որոնք հասած ժամանակ ճեղք-
 ուումեն և սերմերը թափուումեն միջից:

Գ. Ղալաֆիլը—մեխակը—իսկապէս վայրի ծաղիկ
 է համաւուում. բայց որովհետև ընտանեցրած է,
 այս պատճառով նա մտաւ ընտանի ծաղիկների թի-
 ւը: Այս ծաղիկը նոյնպէս յայտնի է ամենքին. սորա
 համար երկարել չեմ ուզում խօսքս. միայն այս
 պէտքէ սսել, որ միււրոնի համար նշւթ կազմույ

տասնաւոր ծաղիկներէց՝ մինն ևս դարափլի դիւլա-
պըն է:

Գ. Գիւլի— սահարին— առաւօտածաղիկն— ոտայել է
իւր անուէր նորա համար, որ սովորաբար ծաղկումէ
առաւօտները և արևի ճառագայթներէց՝ կէս օրին,
թարշամումէ: Բոյսը, որ ունի շատ երկտորդական
ոստեր, մահաւասարութեամբ փոռած միջին ցօ-
ղունի շարս կողմը, երկու սանաչափից աւելի չէ
բարձրանում: Ծաղիկը, որ բլրոյակ է ու ձաղարի
նմանութիւն ունի, լինումէ կարմիր, սպիտակ, դեղին,
երկնաւարանդ գոյներով: Սերմը սև է, սպիտակ օս-
լայանման միջուկով և այնքան մեծ է, որ ոչ մի այլ
բոյսի սերմ իւր մեծութեամբ չէ կարող մրցել սորա
հետ: Տեղային ժողովուրդը այս բոյսի տերևը դնումէ
ցաւոյ աչքի վերայ, որովհետև հոփացնող բնաւո-
րութիւն ունի: Արմաւը (*ialapa radix*) նոյնպէս դեղ
է համարուում զանազան հիւանդութիւնների դէմ:

Ե. Մախմուր— ծաղկի թերթիկները թաւշանման
են. սերմերը պատասպարուած են լինում ծաղկի տակ
զանաւոյ ձուածե բնի մէջ: Ծաղիկը բաւականին ա-
նուշ հոտ ունի: Սերմերը երկայնաձև են և ասղա-
նման:

Զ. Բոփի ծաղիկը, որ ունի դեղին գոյն, մախմուր
ծաղկի դասակարգիցն է և լինումէ երկու անասկ
մէկի ծաղիկը ամբողջապէս դեղին թերթիկներ են

կապում մ. միւսի թերթերը շարուած են ծաղկի բու-
լորակքով և ունեն զեղին միջուկ

Ե. Հինի— ծաղկի բոյսը լեզուանման բաց կանաչ
տեղեւեր ունի, բաղձառատ ցօղունը զեղնազոյն է,
մ. ջր դատարկ. բարձրանում է երկու սանաչափից ոչ
սակի. իրանց ծաղիկներին կարելի է նմանեցնել ե-
րաժշտական սղնձէ, գործիքներին. նորանց գոյները
երբեմն կարմիր են, երբեմն կապոյտ կամ մոխրազոյն
կարմիր, բոյկի սերմերի նմանութեամբ, ընդերը շա-
րուած են լինում մի պատենի մ. ջ, որին հասած
ժամանակ եթէ ձեռք ես տալիս, խկոյն ճեղքուում է
և ողնու նման կուշ գալիս

Ը. Սարդարի— ծաղիկը և երամբ համարեա միա-
նման են թէ տերեւերով, թէ հասակի չափով և
թէ ծաղիկներով, որոնք զլխաւորապէս կապոյտ և
երբեմն սպիտակ են լինում և հոտից զուրկ

Թ. Շարժն բաղձամեայ ծաղիկներից մէկն է. միայն
ցրտերին որովհետև զխմազրելու յատկութիւնից
զուրկ է, այս պատճառով ձմեռը դնում են ծաղկի
անօթների մէջ և զարդարում են դորանով սենեակ-
ների պատուհանները ծօղունը շատ ուտեր է ար-
ձակում իրանից, որոնք մկ ու կէս սանաչափից ամե-
նե ին չեն բարձրանում Տերեւերը լեզուանման եր-
կայն են և լերկ. ծաղիկը զեղին է լինում

Ժ. Աքլորակառար ծաղկաբոյսն սասցել է իւր ա-

նոր ծաղկից, որ կարմիր գոյն ունենալով, երբեմն
 սրբի կատարի նմանութիւն ունի, իսկ երբեմն
 սուսաց զինուորական աստիճանաւորների փնջաւոր
 էքսէլբանտերինն Ռոյսը համարեա մի մարդա-
 չափ բարձրութիւն է ունենում և միջին ցօղուն.
 բաւականին հաստանալու ընդունակ է:

Գեօրգեօքին, Էստմոնին կամ յասիչը և Կարգեչը
 յիշատակելու կարիք չկայ, քանի որ նորանք յայտ-
 նի են սմենքին:

Սուսամբարը թէև ծաղիկների թուում տեղա-
 ւորուեցաւ, բայց նա իսկապէս լայնատերև անուշա-
 հոտ խոտ է և ոչ թէ ծաղիկ: Նորա բուրմունքը
 այնքան խիստ է, որ յիսուն և աւելի քայլից հե-
 սու մարդ կարողանում է հոտոտելիքով հասկանալ
 նորա ներկայութիւնը պարտիզում կամ այգում: Շատ
 հայ կանայք, մանաւանդ գիւղացիներից, այս հո-
 տաւէտ խոտի անունով են կոչուում:

Ձաճքեղն՝ այդ եղեգնաման տերևներով ծաղկա-
 բոյսը, կարմրախառն գեղին գոյնով և մեծ մեծ
 բոլորակաձև ծաղիկներ ունի, որոնք շատ սակաւ
 հոտ են արձակում իրանցից: Բազմամեայ ծաղիկնե-
 րից մէկը լինելով, նա ամենեւին երկիւղ չսւնի ցըր-
 տից և դարունն սկսելիս հին արմատի վերայ դուրս
 են դալ՛ս նոր փարթամ թերթեր և նորանց միջից
 արձակում են աւանց երկրորդական ոստերի ցօ-

դուռները որոնց դադաթներին բացուում են ծաղիկները՝
 Խալեռն սաղանման մի՛ օրօրուիր տիկին— մարդու
 հասակի մեծացող անհոտ կարմիր ծաղիկ է, որ
 կատուի աղու նման քարշ է ընկնում կարմիր և ե
 ղեղնանման ցողունի ու ստերի վերայից՝ Յօղունի
 խողերը, որոնց մէջը ի հարկէ դասարկ է լինում,
 եղևնի հակասույզ ու ուղիկ են:

Կարծիք— գո ղրջ հասարակ տղաի միւս տեսակն
 է, որ դուրեկան ծաղիկ ունենալու պատճառով սո
 վորաբար ցանուում են բուրաստաններում:

Դառնի և խաշխաշի ծաղիկները մի նպատակով են
 միայն ցանուում, այն է՝ որ դործ են ածուում խմո
 րեղէնների մէջ, որոնց տեղացիները « դաթա » ա
 նունն են տալիս:

II. Վայրի ծաղիկներից յայտնի են հետևեալները՝
 ա. Լուսածաղիկ. բ. Նդբօր արիւն. գ. Անթառամ կամ
 ինկան ծաղիկ. դ. Օշօշ. է. Պուտ կամ լալայ. զ. Զան
 ղիւլում կամ՝ Դառնիբասառի հայերի բարբառով
 բարձնիկ. հ. Կատուազանդակ. ը. Սարի — սմբուլ. թ.
 Նղածաղիկ. ժ. Ղանթախի. ժա. Լեզուն ծոծրակով
 դւրս եկած ծաղիկ. ժբ. Զնծաղիկ. ժգ. Խլուպուղ և
 ժդ. Մանուշակ:

Ա. Լուսածաղիկը Կովկասի այն արդիւնաւէտ ծա
 ղիկն է, որ բուսնումէ գլխաւորապէս Արազածի
 ստորոտներում: Արդիւնաւէտ է նորա համար, որ

Ճաղիկը (перс. порошок) լուի մահադեղ համարուելով, հարիւրաւոր մինչև անգամ հազարաւոր վիժերով դուրս է տարուում Եւրոպայի զանազան անկիւնները: Բոյսը հազիւ մի ոտնաչափ բարձրութիւն ունի և նորա սպիտակ թերթիկներով ռզեղին բոլորակ միջուկով ճաղիկներից երկու երեք հատ լայնած են լինում ամեն մի ցողունի վերայ: Այդ բոյսի իբրև վաճառականութեան միջոցի առուստուրով պարսպուտն գլխաւորապէս Աղէքսանդրապոլսիները:

Բ. Եղբօր արեւն կոչուող ճաղկաբոյսը ծներեկի նմանութեան է և բուսնումէ գլխաւորապէս լիւների ստորոտներին ու ձորերի խորքերում, դարնանը: Ինքը ճաղիկը կարմիր է և ունի չորս թերթ: Թէև ընդհանրապէս այդ ճաղիկը, ինչպէս յիշեցի, դուրս է գալիս լիւնտա տեղերում, բայց առաւելապէս լիւնումէ, Նարալագեազում: *)

(*) Այդ երևումէ մեր ժողովրդական բանաստեղծ Համախեցի Պետրոս Մաղաթեանցի (Սեյեազի) երգից, որ առ անձնապէս նուիրուած է եղբօր-արեան նկարագրութեանը: Թէև այդ երգը մի համեմատական նկարագրութիւն է ճաղկի և հայի կեանքի, բայց ես ամբողջութեամբ արտասպումեմ այն այստեղ, յուսալով, որ ընթերցողների համար հետաքրքիր կը լինի նաև Ահա այդ երգը՝

Միւս վերայիշուած լեռնային ծաղիկներէ նկարագրութիւնը եւ թողնուամ, իբրև յայտնի ամենին իրենց կաղամուածքով, հասակով ու գոյներով:

Է .

Ա զ յ ա ն ն է ը :

Ազյաններն այն խոտերն են, որոնք գարնանը թարմ հասակում, մարդիկ դուրծ են ածում թէ կե-

Եղբ ր արիւն կոչուող ծաղ կից յայտնի է,
Որ Արեւը սպանուել ա Հայաստան,
Այս ծաղիկը մարդկանց մօտ շատ յարդի է,
Վասն զի քէ՛ անմեղի արեան նշան:

Այս ծաղիկը ունի առանձին նկար,
Պայէն կանգնած՝ մօտին շատ գայլախաղ քար.
Արեւն առաջին անկետլ կայ յոյժ տկար,
Երկու ագռաւ թաղման ձևը ցոյց կըտան:

Գոյնը կարմիր՝ միայն ունի չորս տերև,
Ջեղ ծներեկ՝ հողից դուրս կու գայ վերև,
Մահն Արեւի ցոյց կուտայ սա ակներև,
Լերանց վերայ կը բուսնի ի ժամ գարնան:

Հայաստանը, որ այսպէս քայքայեցաւ,
Յայտնի է, որ Աստուած խեթիւ հայեցաւ

բակրներն մէջ և թէ սա անց եփելու: Աղցանը համանուն է բանջար բառին Թէ և ամեն մի բանջարն ու հասարակ խոտը բժշկականութեան մէջ յայտնի է, իբրև դեղ, իբրև միջոց այս ինչ ու այն ինչ հիւանդութեան դէմն առնելու, այնու ամենայնիւ սեղային ժողովուրդը, բացի կերակրների մէջ գործածելուց, ուրիշ կերպով չէ կարողանում օգտուիլ նորանից: Տան ծերունիները և իրանց բժիշկ համարողները գիտեն միայն աւանդաբար, թէ այս ինչ խոտը, այս ինչ ցաւի դեղ է, կամ այն ինչ թուփն այն ինչ վերքի սպեղանի: Ամեն մի բժշկական խոտի վերայ խօսելիս ես առ թ կունենամ պատմելու ժողովրդի մէջ աւանդաբար մնացած նորա գործադրու-

Արիւնահոս երկրի օրը վա՛ր է ցաւ.

Ականատես բանին զի՞ վոյթ է վկան:

—

Երկու արիւն մեղ ձգել ա պետինը
 Նախ Արէլի՛ երկրորդը՝ Ներբովթիւր,
 Մեր նորոգման յոյսըն է Միածինը.
 Եւ չեք պատճառ՝ որ լինի մեղ ապաստան:

—

Այս է վճիռ յառաջատես Առլվինի,
 Ինչ մարդոյ որ տան հիւր արնոտ լինի
 Աու քակվի նա՛ թէ կուղ պողպատից լինի
 Այս վճիռը Հայք իրանց աչօք տեսան:

—

Թեան մասին:

Աղցանները երկու դասակարգի կարելի է բաժանել, առաջին՝ դաշտային աղցանները և երկրորդ՝ լեռնային աղցանները:

I. Գաշտային աղցաններ կազմուածն հետևեալները՝
 ա. Սիրէլս. բ. Աղինջ. գ. Իաղձ. դ. Իանդուռ.
 է. Մուշովայ. զ. Թրթնջուկ. հ. Խոթուկ. ը. Թելուկ.
 լ. Շնթելուկ. ժ. Ծասպաշար. թ. Սեախրուկ. ժբ.
 Նղախրուկ (ղջի) ժգ. Փիփեռթ. ժդ. Կնձմնձուկ. ժէ.
 Աւելուկ. ժզ. Շփուաւելուկ. ժէ. Սինձ. ժը. Իեանդա-
 լայ. ժլ. Նուուկ. ի. Խմրախոտ. իա. Իրկցի աղցան. իբ.
 Պարոն — բանջար. իգ. Զիմէլ. իդ. Պապի — պլօր. իե.
 Պատատուկ. իզ. Զլի — կոտեմ:

Ի՞նչ օրէնք է՝ որ նախնեաց մեզաց համար
 Յետինք քաշեն ձմեռ, դարուն և ամառ,
 Վ.իշտ, նեղութիւն, անբաշղութիւն անհամար,
 Արտօնութիւնք աղգային ստուերանան:

Սէյ'ադ, սա ոչ յետինն է, ոչ նախկինը,
 Մեր թշնամեաց՝ հայկ նորն է, կայէն հինը.
 Կանանց մէկը մեզ ծախեց. գնեց մինը.
 Մեր վիճակն է. ո՛ւմնից լինիմք ամբաստան:

Գրուած է ի Վայոց ձորն հայոց 1857 թ. Յունիս
 Խաւրի 6 - ին:

Ա. Սիբէեղ սիրում, գլխաւորապէս փափուկ հող
 և բուսնում, գարնան նշանները երևալու ժամա-
 նակ այգիներում և պարտէզներում: Արմատը շատ
 սպիտակ է ընում և փափուկ հողերի մէջ դուրս
 եկած ժամանակ բաւականին երկայն: Տերեւները կա-
 նաչ են, հարթ և նորանց եզրները պատած են սը-
 դոցածե առամներով: Սիբէլսը քանի թարմ է լինում,
 ուտումեն նորա տերեւները իւր սպիտակ արմատով,
 բայց երբ մեծանում է և հասնում է երկու ոտնաչափ
 բարձրութեան, այն ժամանակ արձակած է լինում
 իրանից ցանցառ տերեւներով և, համարեա՛, ճիւ-
 դերից զուրկ զոխեր, որոնք շատ դաւար են լինում
 և բազում, աղ են դրում:

Բ. Աղնիջը — եղինջը — urtica, բուսնում է գլխա-
 վորապէս առուակների ափերին և աւազոտ տեղե-
 րում: Նորա թարմ ցողունները ու տերեւները գար-
 նանը դործ են դրում պատուց կերակրների մէջ:
 Աղնիջի ցողուն՝ մէջը դառարկ է լինում և ինքը ճիւ-
 դալից, լայն ու երկայն տերեւներով, որոնք պաթ-
 ուինջ խաւարաթի կամ կանաչու նման սղոցածե ա-
 տամներ ունեն և մանր փշեր: Այս պտտձառով մարդ,
 եղնիջին մտենալիս, ստիպուած է լինում ենթար-
 կուել նորա խայթոցներին, փշերին, որոնցից պտտ-
 ձառած ցաւը տեսնում է կէս ժամից աւելի: Սթէ ա-
 ւելայնեմ և այս, որ եղնիջի սերմը ձուածե է լինում,

կարծեմ, նորա գլխաւոր նկարագրու թիւնը վերջա-
ցրած կը լ'նեմ:

Գ. Բաղչ, melissa aamlicenta, նոյնպէս սիրուած
ջրային տեղեր և բուսնուած առուների մօտ: Երբ
շատ հոտաւէտ է և նոր փթթած ժամանակ ու-
տուուէ, բարձրանուած մէկից մինչև երկու արշն,
ունի բաց կանաչ կա՛ր մոխրագոյն տերևներ: Տեղային
ժողովուրդը աւանդաբար այն օգուտն է քաղում
դաղձից, որ ջրի մէջ խաշուած և նորա կաշիք ջրով
լողացնուած ջերմ ունեցող հիւանդներին: Բժշկակա-
նութեան մ.ջ այդ բոյսը յայտնի է իբրև դեղ ստա-
մոքսի և աղիքների հիւանդութեան: Տեղական ժո-
ղովուրդը չորացրած քաղցր վերդը ցեցից աղատ պա-
հելու համար, դաղձով լուսնուած:

Գ. Բանդուռը չափազանց դաւար ճիւղեր է ար-
ձակում իրանից, որոնք ամենեւին չեն բարձրանում
երկրի երեսից, այլ ընկած են լինում հողի վերայ: Տե-
րևները հաստ են, դաւար, թուուկ կանաչ և ուտելու
դժմի կամ ձմերկի կորիզների նման: Սիրուած բուսնել
մարգերի մէջ. ուրիշ կանխիկների կամ խոտերի ստուե-
րի սակ: Գուրս է գալիս ո՛չ միայն գարնանը, այլ
տարուայ ամեն եղանակին և եփած գործ է դրուում
պատերին:

Ե. Մաշոփան — ծնեքեկը — asparagus, անտերև բոյս
է, որ գուրս է գալիս գարնան սկզբում, անմիջապէս

Ծայրին դանաւումէ կոնաձև կոկոսն Յներեկը սկզբում
 կանաչ լինելով, հետոհետէ մոխրագոյն կերպարանք
 է ստանումն Յաղիկը մանր է և թուխ, սերմերը
 կարծր և սև. արմատը երկայն, նուրբ և թելաւոր
 Բուսնումէ ինչպէս այգիներում և պարտէզներումն
 նոյնպէս և լեռնոտ տեղերումն Սա վերջապէս իբրև
 դեղ միզարգելութեան օգտակար է:

Զ. Թրեւձուկը թթուահամ աղցան է, սուսամբար
 անուշահոտ խոտի նմանութեամբ: Մեծացած ժամա-
 նակ նորա ցօղուներ կարմիրումէ: Սիրումէ փափուկ հող
 և ցանումէ բանջարանոցներում. թէև գլխաւո-
 րապէս յայտնի է, իբրև վայրի աղցան:

Է. Խաւեւիկը լայն և երկար տերեւներ ունի, որոնք
 ծածկուած են լինում իսաւով փշի նմանութեան:
 Նորա արմատը սկսումէ անմիջապէս հողի երեսից՝
 Ինչպէս շատ տղցաններ գործ է ածում միայն
 թարմ միջոցին: Նրբ մեծանումէ, իւր կուպտութեամբ
 միւս հասարակ խոտերից ոչնչով չէ գերադասուումն:

Ը. Թեչուիկը այն աղցաններից մէկն է, որ տեղային
 ժողովուրդը գործ է ածում թանով պատրաստող
 ապուրի մէջ: Թարմ միջոցին շատ դալար է. իսկ
 երբ մեծանումէ և հասնումէ իւր սովորական բարձ-
 րութեանը՝ մինչև երկու արշնի, և արձակումէ ի-
 րանից շատ ճիւղեր, այն ժամանակ կոշտանումէ:
 Տերեւները ներսի կողմից կուպտագոյն կանաչ են և,

համարեա՛, ունեն կոնի ձև. իսկ դրսի կողմից մոխ-
րադոյն են և ծածկուած սպիտակ վոշու նման հիւ-
թով : Աերմը բոլորովին սև է և շատ մանր : Այս
աղցանը մեծացած ժամանակ այն անպիտան խոտե-
րի թւին կարելի է վերագասել, որոնք իրանց կոշ-
տացած, փայտի նման ցողուններով պէտք չեն դա-
լիս մինչև անդամ անասունների համար :

Թ. Ենթեղուկ նման է իւր տերեւների կազմու-
թեամբ ուտելու թերուկին : Մարդիկ արժանացրել
են նորան այդ անուանը այն պատճառով, որ նա
չէ ուտուում :

Ժ. Ծառապաշարն այն աղցաններից մինն է, որ անձի
նման աղի և քացախի հետ ուտուումէ հում ժա-
մանակ, առանց եփելու կամ կերակրի մէջ զցելու :
Բոյսը բաւական խիտ է տերեւներով, որոնք դուրս
գալուն պէս տարածուումեն գետնի երեսին, այնպէս
որ արմատը կետրոնի նման մնումէ իւր շուրջը տա-
րածուած տերեւների մէջ : Իրանք տերեւները այնքան
լայն չեն, որքան երկար և նորանց եղրները պատած
են սղոցաձև աւելի ևս խոր ընկած տտամներով :
Քան թէ պաթունջինն է :

ԺԱ. Սեռիւրուկը հարթ, երկայն տերեւներով աղ-
ցան է անուշ համով և նորա թէ տերեւները և
թէ ցողունը կապտադոյն կանաչ են :

ԺԲ. Աղտարուհը սևախրկի նման է, թուևոյ կանաչ տերևներով :

ԺԳ. Փիփեւից բաղամեայ աղցաններից մինն է, թուևոյ կանաչ տերևներով, որոնք կխաշրջանի նման են և այդ՝ սղոցածե, բութ առամներով պատած՝ կխաշրջանի կեարոնից կպած է տերևի կոթը՝ Կնքը լպրծուն հիւթ ունի և նորանով եփած ջուրը թանձրանում է և մեղրի նման ծոր է տալիս: Գարնան սկզբում և աշնան վերջերին անոյշ համ է ստանում փիփեւիթը և ուտելու համար ախորժեղի: Ծաղիկը կապտադոյն է և սերմը ապարակ: Փիփեւիթի մի տեսակը յայտնի է սուղտ անունով և նա այս յօդուածում կըմտնի հասարակ խոտերի շարքը:

ԺԴ. Կնչֆոջուհը մասամբ կարելի է նմանեցնել սամթի. ունի կծու համ: Հասակի սովորական բարձրութիւնը հաւասար է երկու, երեք ոտնաչափի: Աճում է առաւելապէս բարբարոս տեղերում:

ԺԵ. Աւելուհը, lapatum, բուսնում է թէ այգիներում ու պարտեզներում և թէ ամայի, վայրի տեղեր: Սորա տերևները թրթնջկի տերևների նման են. բայց նորանցից աւելի երկայն են ու տապահամ, որ մարդիկ հիւսելով՝ պահում են եփելու համար: Ծաղիկը ողկուղածե, դեղնադոյն և վեցթերթեան է. ունի եռանկիւնածե և շաղանակադոյն սերմեր:

Արմատը մի մասնաշափ հաստութիւն ունի, երկայն է ու քիչ զկոնսպոյն

ԺԶ. Նփասեղուէն աւելի մի այլ տեսակն է. միայն չէ ուտուումի Սա ունի աւելի լայն (ձեռքի լայնութեան չափ) և աւելի երկայն տերևներս Տեղացի ժողովուրդը այս բոյսը գործ է ածում իբրև բժշ կական դեղ. ուռոյց պատահած ժամանակ հում կամ եփած շփուաւելուկը քաշումեն ուռոյցքը նստեցնելու համար:

ԺԷ. Սինջը, SCORSONERA, բարակ և երկայն տերևներ ունի, որոնք փնջի նման արմատի մօտ կարծես կապած, փո ուումեն հողի երեսը դուրս եկած ժամանակ: Բոյնը կապտադոյն կանաչ է և դրսի կողմից տերևը ծածկուած է մոխրագոյն թաւամաղով: Արմատը երկայն է և սպիտակ: Թէև սիրումէ բուսնել այգիներում, բայց պատահումէ և ամայի, անջրդի տեղերում: Սինձը ծտապաշարի նման, առանց եփելու, աղով ուտումէ, որովհետև ախորժեղի, անոյշ համ ունի: Այս բոյսը օձահարի ու կարճահարի դեղ է և գործ է ածում այսպէս. նորան ջրի մէջ եփելուց յետոյ դնումեն օձահար կամ կարճահար տեղը և տալիս են նոյնպէս վիրաւորուածին, որ ուտի այդ բոյսից և խմի նորա ջրից: Այդպիսով հիւանդի քրտինքը դուրս է բերում իւր հետ և մարդու կազմուածքի մէջ մտած թոյնը:

ԺԸ. Գեանդաշան կամ սխառուէն իւր տերեւերի ձեռով կազմութեամբ և համով շատ նման է սխառութեան նա վայրի բանջարներէց մէկն է համարուում, բայց որովհետև դուրս է դալիս նշնապէս այգինէրում ու դաշտերում, այս պատճառով ես դաշտային բանջարների թւում տեղափոխեցի: Ասիական վայր պետութեամբ պատրաստուող սլաներների նիւթերէց մէկը՝ Ծայան և սխառուէն է կազմում, որից սփռու են քաղում պանրադործութեան միջոցին անասնապահները:

ԺԹ. Նուուէն քիչ թէ շատ նման է սնձին, կանաչ տերեւերով: Սա համարուում է ժողովրդի մօտ իբրև փորահարմի դեղ, որ բրնձով եփում, ուտեցնում են հիւանդին:

Ի. Խճրախարչ, ծներեկի նման, դարունն սլանիկ, արձակում է իրանից մի ոտնաչափ բարձրութեան դալար ցօղուն, որ մարդիկ քաղում աղցանի տեղ դործ են ածում:

ԻԱ. Իբիցի աղցանը (երէցի—աղցանը) անուշահոտ և անուշահամ բանջարներից մէկն է, որ բուսնում է դարնան սկզբում, վայրի, անջրդի և քարքարատ լճերների ու սարերի ստորոտներին: Այս բանջարը իւր պատուական համի պատճառով թէև հրապուրում է դէպի ինքը շատ աղցանաբարձր, բայց սորանք քարքարոտ տեղեր ընկնելով, երբեմն են-

Թարկուումեն օձերի խայթոցներին:

ԻՖ. Պարոն—Բանջարը թէև առանձին աղցան է համարուում. բայց ես ծանօթ չը լինելով նորա յատկութիւններին, անկարող եղայ դնել այս տեղ այդ մասին մի քանի խօսք:

ԻԳ. Զիճչէ երկու տեսակը կայ, մի տեսակը թարմ ժամանակ ուտուումէ իբրև աղցան, իսկ միւսը ո՛չ: Երկուսն ևս ունեն մի մատնաչափ հաստութեան միջին ցօղուն, որից արձակուումեն շատ մանր սատեր և բւնումեն գլխաւոր ցօղունի ուղղութիւնը Տերւները բաց կանաչ են՝ համարեա՛, կոնաձև և ունեն աչքի ընկնող ջիղեր: Այս բոլոր ընդունակ է շատ մեծանալու. սիրումէ փափուկ, ու հող: Նորա անհամեմատ շատ սերմերը շարուած են լինում գլխաւոր ցօղունի և միւս ճիւղերի ծայրերին և նրմանումեն մանր վառ օղի հատիկներին և սաթի պէս փայլումեն: Կրակի մէջ գցած ժամանակ, ճայճայթումեն և մեծ բաւականութիւն են պատճառում իրանց հետ խաղացող երեխաներին:

ԻԴ. Պապի—պարը տերեւաշատ աղցան է, որ երբեմն գոյժ են ածում ապուրի մէջ: Ցօղունը դալար ժամանակ ուտուումէ. իսկ հաստացած ժամանակ արձակումէ իրանից շատ ճիւղեր, որոնք, ինչպէս տերւները, մոխրագոյն են և ծածկուած են բարակ խաւով:

ԻՆՍ. Պատարագութիւն իսկապէս այն խոտն է, որ աղցանի տեղ գործ է ածուում ապուրի մէջ Նորա երկայն, նաւաձև տերեւները, որոնք կոթերի մօտ բաժանուած երկու եղջիւրի են նմանում, շարուած են շատ երկայն, թելի նման ցօղունի վերայ: Այլ ցօղունն արձակումէ իրանից այլ շատերը, որոնք ինչ բոյսի կամ ծառի մօտ լինումն, փաթ-թումումն նորա վերայ Սորա ծաղիկը կապտադոյն է. իսկ արմատը ցօղունի ուղղութեամբ ձգուումէ հողի մէջ:

ԻԶ. Զրի—հոտե՛ջ բանջարանոցում ցանուող կոտեմի վայրի տեսակն է, որ դուրս է դալիս ջրի ափերին: Սորա համը կոտեմի համի նման կծու է:

Սորանով վերջանումէ դաշտային յայտնի աղցանների կամ բանջարների նկարագրու թիւնը, որ, խոտովանումէ, շատ կարճառօտ է, և այլ կերպ չէր կարող լինել, որովհետև յօդուածիս նպատակը ո՛չ թէ բուսաբանութիւն գրելն է, այլ ծանօթացնել ընթերցողներին թէ ինչ տեսակ բոյսեր են աճում նահանգում: Իսկ այդ բոյսերի կարճառօտ նկարագրութիւնը և համեմատութիւնը այն նպատակը կունենայ, որ խոտերը կամ ընդհանրապէս բոյսերն որոշելու ժամանակ սխալանքի մէջ չի ընկնի նորանցով հետաքրքրուողը և նորանց կիանքի աճման հետ ծանօթանալ ուզողը:

Եւ այժմ դառնումեմ լեռնային աղքատների նկարագրութեանը :

11. Լեռնային աղքատներ համարումեն հետևեալ բանջարները :

ա. Բոխ. բ. Էրնջանուկ. գ. Ողորմակոթ. դ. Ղանձիլ. ե. Բաղրոյան. զ. Վապառ. է. Բոլի. ը. Ուռցն. Ջ. Փէյփաղ. թ. Մանուկ. ժ. Բեղ. թք. Շուշան, և թգ. Կանգառ. թդ. Կծուուկ և թե. Կոճղէղ :

Ընդ որ վերոյիշուած բանջարները, բացի կոճղէղէց, բաղրոյանից, փշուկից և կծուուկից, մի նպատակի համար են միայն ծառայում այն է՝ որ մարդիկ նորանց ցօղունները, — զոխերը - աղ են դնում: Եթէ մոռնէք Սրեանցու խոհանոցները կամ նկուղները, դուք անուպատճառ կը տեսնէք այն տեղ տասնաւոր բոլորիներ, որոնցից մէկի մէջ բոխ է աղ դրած, միւսի մէջ էրնջանուկ, երրորդի մէջ ողորմակոթ, չորրորդի մէջ սիբէլի զոխ և այլն: Եւ այս բոլորը աշխատասէր հայուհու գովիլի անտեսութեան շնորհիւ . . .

Ա. Բոխը ինչպէս և միւս զոխերը, դիտաւորապէս դուրս է գալիս Նոր-Բայտղէղի գաւառներում և այլ լեռնոտ տեղեր: Դուրս եկած տեղից այդ բանջարը արձակումէ իրանից մի ոտնաչափ բարձրութեան չորս, հինգ ցօղուն, տափարակ, բաւականին հաստ, դաւար և սպիտակ - դեղնադոյն: Արմատի մօտ

այդ ցօղունները բոլորովին սպիտակ են, բարակ և նաւի ձևով : Յօղունների ծայրերից արձակուումեն փնջի նման մի քանի ճիւղեր, որոնք այլ դնելու միջոցին կոտորուումեն : Տեղական ժողովուրդը այդ այդ դրած բոխից, որ սկզբում դառնաւուն է լինում, պասուց զանազան կերակրներ է շինում օրինակ՝ սապակում է այն ալըով շինած փոշու մէջ և այլն :

Բ. Էրնջանուէն ունի փշերով մեծ մեծ տերեւներ, որոնք քաղողին բաւական նեղութիւն են պատճառում : Սորա բոլորովին կոշոր, առանց երկրորդական ճիւղերի դաւար ցօղունը լինում է անոյշ համով և ախորժելի : Այլ դրած ժամանակ մնում է նոյնութեամբ ինչպէս թարմ ժամանակ. միայն ստանում է փոքր ինչ դեղին դոյն :

Գ. Ողորմախիւր աղաթթու դրուող զոխերից մէկն է, անփուշ տերեւներ ունի և նորա ցօղունը աւելի բարակ է էրնջանուկի ցօղունից :

Դ. Աանջիւր, կարելի է ասել, աւելի շուտ արմատ է, քան թէ բարձրահասակ բոյս, որ գործ է դրուում այլ դնելու համար :

Ե. Բաջրբանը մեծ տերեւներով բոյս է, որ սիրում է ջրային և հով տեղեր : Բուսնում է ձորերի ու հովիտների միջից հոսող առուների ու գետերի մօտերը քում՝ քարերի մէջ, և բարձրանում է մարդու հասակից բարձր : Յօղունի մէջը դատարկ է, և ինքը շատ

Ջրալի: Սորան մարդիկ ադ չեն դնում, միայն երբեմն
թարմ ժամանակ ւտումեն:

Գ. Աստուծոյ փշալից բոյս է, որ օիրում, անջրդի տե-
ղիւր և բուսնումէ այս աստուծառով այնպիսի քար-
քարոտ, կրախառն հողերի մէջ, ուր արեղակի ճա-
ռագայթներն աւելի են ներդործում: Բոյսը չէ բարձ-
րանում, այլ տարածուումէ հողի վերայ: Տերեւների
կազմու թիւնը քիչ թէ շատ նման է բալենու տերե-
ւերի կազմութեանը: Օտղիկները սպիտակ են և նը-
րանց կանաչ կոկոմները մարդիկ հաւաքում, ադ են
դնում: Աարմիր մանր ու բոլորակ սերմերը փամփըշ-
տածը բների մէջ են լինում, որոնք հասած ժամա-
նակ ձեղքուումեն և թունդ-կարմիր ու բաղցը հիւ-
թը սերմերի հետ երևումէ: Մի փոքր միջոցից յե-
տոյ հիւթը չորանումէ և սերմերը թափուումեն դե-
տին:

Է. Բոյին ամենապարտուական և հետեւապէս լիռ-
նային ամենաթանդ բոյսն է: Ունի մանր, խիտ ձյւ-
ղեր ու տերեւներ և հաստ ու դալար ցողուն, որ ա-
ւելի աժան է, քան թէ նորա վերայ կանդնած փրն-
ջանման, մի բնի մէջ հաւաքուած ծաղիկը: Յողունի
համը գլխաւորապէս դառնաւուն է, բայց պատա-
հում է և բոլորովին քաղցրահամը: Քաղցր է մա-
նաւանդ նորա ծաղիկը, որ բաղուում է ուտելու հա-
մար դեռ չը բացուած ժամանակ: Այս բոյսի հոտը

շատ սուր է, այնպէս որ մարդ բոլի կերած ժամա-
նակ, սխառի նման, հոտը նորա բերանից երկար մի-
ջոյ չէ հեռանում:

Ը. Ուսցը շատ մանր, կոլոր և թուղ—կանաչ տե-
րեներ ունի և փնջի նմանութեամբ դուրս եկած
ցօղուններն ամենեւին չեն բարձրանում: Այս բոյսը
սիրում է կրային հող և այս պատճառով դուրս է
դալիս անջուր տեղերում, քարերի տակ, բլրների ու
լեռների վերայ, ունի կծու համ և գործ է դրում
կերակրների մէջ: Մարդիկ գլխաւորապէս նորանից
օղի են քաշում, որ գործ է ածում մի քանի հիւան-
դութիւնների դէմն առնելու համար:

Միւս գոխերը, ինչպէս են՝ փէյվազը, մանդակը,
քեզը և շուշանը, առանձին նշանաւոր յատկու-
թիւններ չունեն. սորա համար և թողնումեմ ա-
ռտնց ուշադրութեան, նա մանաւանդ, որ այդ լիւ-
նային բոյսերը շատ բիչ են ինձ յայտնի: Շուշանի
համար միայն այս կարելի է ասել, որ նա համար-
ում է նոյնպէս վայրի ծաղկաբոյս՝ սպիտակ ծաղ-
կով:

Ը.

Հասարակ խոտեր:

Որտեղ կայ Աստուծու տուած լոյսը, որտեղ արե-

դակը սփռում է իւր կենդանարար ճառագայթները, այնտեղ կան և հազար ու մի, բիւր տեսակ խոտեր՝ այս ինչ ու այն ինչ յատկութիւններով : Այդ հազար ու մի տեսակ խոտերից բուսնում է և Նրեանի նահանգում : Բայց որովհետև նորանցից շատերը տեղական ժողովրդին յայտնի չեն իրանց բազմատեսակ յատկութիւններով, այս պատճառով և չունեն անուն : Նրբ մի որ և իցէ ծերունու հարցնումես այս կամ այն խոտի անունը, նա ասում է. «Նա ինչ գիտեմ, որդի, խոտ է, էլի» :

Նախընթաց դիտում մենք հաշուեցինք քառասուն և մի տեսակ աղցան. բայց հասարակ խոտի ակելի սակաւ տեսակներն են յայտնի առանձին առանձին անուններով :

Թուենք հասարակ խոտի յայտնի տեսակները՝

ա. Իշակաթնուկ. բ. Տուդո. գ. Զիմէլ. դ. Ճառտուկ. ե. Նդեշնակ. շ. Առուակարաս. է. Մեղրածրճուկ. ը. Շիրին — բիան. լ. Դաղաթի — կուռ. ժ. Կարալատնիկ. ժա. Ծոփ — լեզու. ժբ. Զայիր. ժգ. Մաղ — խոտ. ժդ. Լորա — խոտ. ժե. Զու — ձու. ժզ. Շլթայախոտ. ժէ. Սիրի-սիրի. ժը. Ուզարլուկ. ժը. Կռթուկ. ի. Տոնիր. իա. Առուոյտ. և ուրիշ շատերը :

Ա. Իշակաթնուկը շատ կաթնալի խոտ է : Նորաձի դերը կամ տերեւները կորելու ժամանակ կաթը թափուում է վերաւորուած բոյսից : Այդ նորա ար-

տասուքն է: Տերւեները նեղ և երկայն են, ցանցառ
ու կանաչ գոյնով: Մաղիկները դուրս են դալիս ցօ-
ղունի գլխին. նորանք մանր են և դեղնաագոյն: Ասթը,
որի համար յիշեցի, շատ խիստ լուծող բնաւորու-
թիւն ունի, աւելի լուծող քան թէ դեռ չսկի ձէթը:

Բ. Տուգոր փիփեռթ բանջարի նման տերւեներ, լը-
պրիծուն հիւթ և սերմեր ունի. զանազանուում է
միայն նորանով, որ տղտի ցօղունը աւելի մեծանում,
բարձրանում է և նորա թէ ցօղունն ու ճիւղերը և
թէ տերւեները բրդոտ են լինում ծայր է ի ծայր:

Գ. Զիճէլի կամ՝ Գառնի—Բասարի հայ գիւղացի-
ների բարբառով՝ մուժունդուրկի արտաքին ձևի
մասին ես արդէն խօսեցի աղցանների նկարագրու-
թիւնն անելու միջոցին: Ենչպէս վերևը տեսանք, զի-
մլը երկու տեսակ է լինում՝ ուտելու և անպէտք:
Այս երկրորդն, անպէտք խոտերի կարգն է դասուում
նորա համար, որ ո՛չ մի անասուն, բայց քաղցած ի-
շուց և կովից չի համաձայնի անպատուել իւր ձա-
շակը և ուտել նորանից:

Դ. Ճառփճառփաւիլը թոււող—Վանաչ և երկայն ու
ցանցառ տերւեներով խոտ է, որի ցօղունը երբեմն
հասնում է մինչև մի մարդաչափ բարձրութեան, և
արձակում է իրանից երկրորդական ճիւղեր ու ստեր,
որոնց մէջը դառարկ է: Այս խոտը դալար ժամա-
նակ անասուններին կերակրի տեղ է ծառայում, իսկ

երբ չորանումէ, անալքանումէ: «Ճառտճառտուկ»
բառը, ինչպէս երևումէ՝ դուրս է եկել իւր այն
յատկութիւնից, որ չորացած միջոցին կրակի մէջ
դցելիս անդադար մինչև մոխիր դառնալը ճայթճայ-
թումէ: Բժշկական կէտից նայելով այդ խոտի վե-
րայ, տեղական ժողովուրդն այն օգուան է քաղում
նորանից, որ այրումէ և ստացած կիսափոշին խառ-
նում կարագի հետ և այսպիսով, սպեղանի շինած,
քսումէ երեխաների երեսնն անմաքրութիւնից առա-
ջացած «ջրջրուկ», կոչուող խոցերի վերայ:

Ե. Եղէշահը կամ՝ ինչպէս Արարատեան դաշտի հայ
գիւղացիներն են ասում՝ Եղեռնակը ցօղունների մի-
ջուկի դատարկութեամբ, ծաղկի կապոյտ գունով և
կազմութեամբ նման է ճառտճառտուկին, միայն զա-
նադանութեամբ նորանից ցօղունների մեծութեամբ և
դալար կազմութեամբով, որոնց՝ դրսի կողմից ընկած ջի-
ւերը պարզ երևումեն ձգուած թելերի նման: Նալար
ժամանակ, այս բոյսը ամենախորժելի կերակուր է հա-
մարուում դառնների ու ոչ խարների համար. իսկ չո-
րացած ժամանակ ոչինչ բանի պէտք չէ դալ՝:

Զ. Առուակարասը մի ոտնաչափից աւելի չէ բարձ-
րանում: Տերեւների կազմութեամբ այդ խոտը նման
է մաղաղխոսին. ունի մանր և թունդ-դեղին ծա-
ղիկներ, որոնք փայլումեն և, կարծես, դեղին ձիւ-
թաներկով փայլ տուած լինեն. սիրումէ բուսնել

առուակների ակերին, հով տեղերում՝ արեգակի
ճառագայթներից հեռու:

Է. Մեղրածձի - ինչպես ասում են, բաւական ա-
ներես խոտ է՝ այսինքն, բուսնում է ամեն տեղ՝ այգի-
ներում, պարտեզներում, մարդերում և առուների
ակերին: Ունի սրտաձև, թունդ - կանաչ և սղոցաձև
ատամներով շրջապատած տերևներ և սպիտակ մանր
ծաղիկներ: Մեղրածները այս ծաղիկներից առատ հիւթ
են հաւաքում մեղր շինելու համար. որովհետև նո-
րանց խողովակաձև արմատների մէջ լին է մեղրա-
նման հեղուկ, որ մինչև անգամ երեխաները ծծու-
մեն ծաղիկների միջից: Ինքը բոյսը առատ է երկ-
րորդական ոստերով ու ոստիկներով և բաւականին
մեծանալու ընդունակ է: Հասարակ խոտերի թւում
լինելով, նա անպէտք է իբրև անասունների կերա-
կուր:

Ը. Բիանը կամ՝ Արարատեան դաշտի հայ գիւղա-
ցիների բարբառով՝ խարածիչը, liquiritium - իբրև
անասունների համար կերակուր անպէտք է. բայց
իւր բժշկական դորութիւններով օգտուէս: Նա երկ-
րորդական ոստերից զուրկ է և բարձրանում է մի ար-
շնից ո՛չ աւելի: Յօղունի վերայ եղող թփերը կար-
գով ընկած են և նորանց ամեն մէկի վերայ մէկ մէ-
կու հակառակ դասաւորուած են տասը - քսան երկ-
րորդական մանր ու երկար տերևներ: Այս բոյսի

սերմերը, բողկի սերմերի նման լինելով, շարուած են
 երկար պտտեանների մէջ: Քիանը երկու տեսակի է
 բաժանու լւմ՝ «Ղի-Քիան», այսինքն դառն քիան և
 շերին-Քիան, այսինքն՝ բողջը քիան: Աերջինը զանա-
 զանու ումէ առաջինից իւր տերեւների մեծութեամբ,
 և աւելի մեծ հասակով: Բշտկական կէտից նայելով
 քիանի վերայ, հարկուոր է ասել, որ նա հազի դէմ
 օգտաւէտ դեղ է համարուում:

Թ. Գաղտի - հուսու, plantago, իւր տերեւների կաղ-
 մութեան շնորհիւ ստացել է եզան - լեզու անունը, որ
 գործ են ածում ինչպէս Արարատեան դաշտի յի-
 շեայ գիւղացիները, նոյնպէս և Երևանի դաղձական
 հայերը: Գաղտի - կոի տերեւները, որոնք գլխաւորա-
 պէս փռուած են լինում հողի երեսին, ունին դրսի
 կողմից ձգուած կօթը ջից, որի պատճառով լասի-
 նայինները septinervia, կօթնաջիղ, անունն են տու-
 ել նորան: Տերեւների միջից թելաւոր արմատի վերայ
 դուրս եկած ցողունի գազաթին ցորնի հասկի նման
 կարգով շարուած են լինում մանր տուպահամ սեր-
 մերը, որոնք փորահարութեան, աչքի ցաւերի դէմ
 օգտաւէտ դեղ են համարուում: Երանք տերեւները
 նոյնպէս առողջարար դեղ են և տեղական ժողո-
 վուրդը գործ է ածում վէրքերի վերայ դնելով նո-
 րանց՝ շարաւը դուրս բերելու համար: Ինչպէս երե-
 ւումէ, այս բոյսը, որ խոնաւ հող է սիրում և գրե

խաւորապէս դուրս է գալիս առուների ավերին, շատ տեսակներ պէտքէ ունենայ, բայց տեղացիները նորանց մէջ զանազանութիւն դնել չը գիտեն:

Ժ. Կոտայի մարտիկներ իւր անուան ստացել է նորա համար, որ հողի երեսից չը բարձրացող այդ խոտը և նորա սատիկները կաքաւի ոտերի նմանութիւն ունեն: Անասունները, մանաւանդ կովերը, ախորժակով ուտում են նորան:

ԺԱ. Ծոփ—Եղբւի տերեւները, ինչպէս ցոյց է տալիս անուներ, իրանց փոքր դիրքով պատկերացնում են ծոփ լեզու: Սա նոյնպէս, կաքաւատանկի նման, հաղիւ թէ բարձրանումէ հողի երեսից:

ԺԲ. Չայիրը այնքան հողի երեսին ոստեր ու տերեւներ չունի, որքան գետնի տակ արմատներ և շուտով տարածուումէ ու խեղճացնում թէ իւր մօտ եղած տրնկերին և թէ խաղողի որթերին: Արովհետեւ այդ երկար ու բարակ տերեւներով խոտը սիրումէ դուրս գալ թմբիլի վերայ, հենց մասամբ այս պատճառով այգեգործները խաղողի որթերը նորանից ազատ պահելու համար ամենայն տարի փորում են այգիները: Չայիրը դուրս է գալիս ոչ միայն փափուկ հողէ մէջ, այլ և քարքարոտ ու գլխաւորապէս խոնաւ տեղերում:

Մազ—խոպն ու շարխոպը, որոնք ԺԳ. և ԺԴ. տեղերն են բռնում հասարակ խոտերի կարգում, ա

ուանձին աչքի ընկնող յասկութիւններ չունեն և
այնքան յայտնի են ընթերցողին, որ եւ նորանց մա-
սին խօսելու հարկաւորութիւն չեմ գտում :

Ժն. Ձու չո՞ւ խոտն իւր անուան ստացել է փոքրիկ
թունդ-կանաչ և փամփշտանման բների մէջ հալնուած
ձուակերպ պտուղներից, որոնց մէջ լցուած են լի-
նում նորա սերմերը: Այդ փոքրիկ ձուերը երեխա-
ների համար խաղալիք են համարուում, որովհետեւ
քաղում և կռուայնուումն նորանց. այսինքն մէկը միւ-
սի ձուն աշխատումէ կոտրել և այդպիսով յաղթող
դուրս գալ իւր ընտրութեան մէջ: Բոցար ոչ մի բը-
ժրչկական կողմից յայտնի չէ տեղացիներին. նա
մինչև անգամ անպէտք է իբրև անտուների կե-
րակուր. հասնումէ մի կամ մինչև երկու արշին
բարձրութեան և ունի սպիտակ ծաղիկներ և շատ
երկրորդական ու երրորդական ոստեր ու ոստիկներ:

ԺՁ. Եղբայախոտի տերեւերը քիչ թէ շատ կա-
ւելի է նմանեցնել եղեշնակի տերեւներին. միայն առա-
ջինները աւելի մանր են, լայն լայն ու սղոցաձև եղըր-
ներով. ծաղիկը, որ դուրս է գալիս խաւոտ ու մէջը
դատարկ բաց—, եղին լայրի նման ցօղունի գաղա-
թին, լինումէ բոլորակ և թունդ—դեղին, որ թա-
ւամեղուց յետոյ թողնումէ միայն ցօղունի գլխին
աստղանման և մոխրագոյն թոփ շիւղեր: Այդ շիւղե-
րը ամեն մի բարակ հողմից յետոյ թեթև լինելու

պատճառով խրուում, սարուումն, շատ ու շատ հե-
ռու: Շղթայախոտի այդ ցողունները երեխաների հա-
մար խաղալիք են կազմում: սորանք այդ ցողուններից
մի բանի տասնեակ քաղում, շղթայ են կապում և
հաղցնումն պարանոցներին, ականջներին և ըն:

Ժ. Արի — սիրի, կամ՝ Նոր—Բայազէտցու բար-
բառով, էրէֆնա—չը երեքթերթեայ խոտ է, որ ամե-
նե ինչ է բարձրանում գետնից մի ոտաչափից աւելի.
ունի կարպոյտ, սպիտակ և կրբեմն երկներանոց թոփ
ծայրիկներ և բուսնումէ խոնառ տեղերում, առաւե-
լազէս առուակների ուփերին: Երևանում ընդհա-
նուր սովորութիւն է դարձած, որ երիտասարդները,
կամ օրիորդները, երբ դուրս են գալիս պարտէզ, մի
առանձին բաւականութիւն և զուարճալիք են հա-
մարում իրանց համար քաղել այդ խոտից և իրանց
մէջ նշանակելով, թէ նորա մի տերւը այս ինչ օ-
րիորդն է կամ երկրորդ տերւը այն ինչ յատկու-
թիւններով երիտասարդը, առաջարկումն ընկերնե-
րին ընտրութիւն անել այդ երեք թերթի մէջ: Երբ
ընտրութիւնը լաւ կամ վատ է լինում, նշան անողը
յայտնումէ, որ ընտրողի վիճակը այս ինչ հարուստ
կամ սղքատ և կամ այն ինչ անմիտ ու կաղ երիտա-
սարդը կամ օրիորդն է լինելու: Ահա մի անմեղ խա-
ղալիք, որին նախապաշարուածները երբեմն հաւաս-
են ընծայում . . . :

ԺԸ. Ուղարչու-նը կամ՝ ինչպէս Գառնի—Բասարի հաս-
 ցերն են ասում՝ սպանող այն բոյսն է, որ դուրս է
 գալ՝ սամայի, անջրդի դաշտերում և քարքարոտ
 բլրների վերայ ու ճանապարհների կողքերին: Արե-
 գակի խիստ ճառագայթներն ամենևին չեն ներդու-
 ծում նոսա վերայ, որովհետև արմատը խոր է գնա-
 ցած լինում գետնի մէջ: Արմատի վերայ միանգամից
 դուրս եկած 20—30 ի չափ ցողունները երկրորդա-
 կան ոստեր չունեն և, բարձրանալով ո՛չ աւելի քան
 մէկ ու կէս ոտնաչափ, տալիս են կոշոր պտուղներ
 նոյնպէս կոշոր և կարմիր սերմերով: Բոյսը, չը նա-
 յելով, որ անպիտան հոտ ունի, այնու ամենայնիւ
 չորացրած գործ է դրուում թուրքերի մօտ, իբրև
 ծխանելիք: Ինչ նշանակութիւն ունի խուսկը բը-
 րխատոնեաների մօտ, նոյնը ունի և ուզարլուկը կամ՝
 որ մի և նոյն է՝ սպանող պարսիկների մօտ: Քող
 աւելորդ չը լինի յիշել այստեղ այն ժողովրդական
 առածը, որ միշտ ասուումէ, երբ ուզուվեն հաս-
 կացնել մէկի անորոշ բնաւորութիւնը կամ անօգուտ
 և ասարդիւն լինելը՝ «Ո՛չ հայի խուսկ է և ո՛չ թուր-
 քի ուզարլուկ»:

ԺԹ. Կառնու-նն ահագին տերևներով խոտ կամ, ա-
 ւելի լաւ է ասել, փուշ է, որ սիրումէ բուսնել
 խոնաւ տեղերում: Նորա տերևները մի մի բնական
 հովանի (ЗОНТИКЪ) են մարդու համար պէտք եղած ժա-

մանակ: Յօղուներ, որից արձակուումն շատ երկյուր-
դական ոտներ, մի մարդաչափ բարձրութիւն ունի և
չափազանց փուխը է կոտրելու համար:

Ի. Տօնիքը—տորոնք—վայրի բոյս կամ, աւելի լաւ է
ասել, ներկ է, որ Երևանի նահանգում էլ ընտա-
նեցրած և էլ ստացած այն համաշխարհային նշա-
նակութիւնը, որ մի ժամանակ ունէր նա Կովկասի
այլ տեղերում աշխարհն ներկի հնարելուց առաջ:

ԻԱ. Նօնջան—առուոյտն—այն խոտը է, որին մեր
առ. ձեռն բառարանը բացատրութիւն տալու ժա-
մանակ «երեքնուկ», անունն է տալիս: Երեքնուկ
խօսքը Նոր—Բայազետցու բարբառով առուոյտի տե-
սակի այն խոտն է, որին Երևանցիները սիրի—սիրի
են կոչում և որի մասին խօսք եղաւ մի փոքր ա-
ռաջ:

Նօնջան բազմամեայ խոտերից մէկն է և շատ
աճելու ընդունակ. թէև առաւելապէս սիրում է սև
հող, բայց կարելի է բուսցնել ամեն որակութեան
հողի մէջ: Բազմամեայ լինելով, ապրում է 10-ից մին-
չև 12 տարի և իւրաքանչիւր տարուայ մէջ հըն-
ձուում է երեք կամ չորս անգամ: Նորա տերեւները
երեք թերթեայ են և ինքը ցօղունը գարնան ըս-
կրգբում շատ դալար է և երկյուրդական ոտներից
համարեա զուրկ. հասակը մինչև մի արշին կամ մի
փոքր աւելի բարձրութեան հասնելուց յետոյ, կա-

պոյտ ծաղիկներ է դուրս գցում, որոնց սերմը ման-
րիկ որդերի բների նմանութիւն ունի :

Եօնջան հասարակ խոտերի մէջ ամենասննդարար
ու արդիւնաւորն է համարուում . ամենասննդարար
է անասունների համար, որովհետեւ նորանց ամե-
նահիւթալի կերակուրը դարուց յետոյ կազմումէ
եօնջան, իսկ արդիւնաւոր մարդկանց համար, որով-
հետեւ սորանք, ընդարձակ արտեր պարապեցնելով այդ
խոտի վերայ և աշխատութիւն գործ դնելով, հա-
ղարաւոր մանէթներ են վերցնում : Ընդհանուր ա-
ռած է դարձած այն միտիթարական խօսքը, որ տէրը
ասել է իւր իշուն «մի սատակիր էշս, մի սատակիր
գարունը կդայ առուոյտ կբուսնի», որին հետևումէ
դու կուտես, կըպարարտանաս : Սա մի պարզ ապացոյց
է եօնջայի սննդարար և օգտաւէտ լինելուն :

Եօնջան տաք կլիմայի բոյս է . այս պատճառով նո-
րա մշակութիւնը լինում է դաշտային տեղերում :
Ամենալու առուոյտը կամ եօնջան դուրս է գալիս սև
հողի մէջ ցանած ժամանակ և եթէ ջրուում, շուտ
շուտ, գոնէ տասն օրը մի անգամ, այն ժամանակ
ինչպէս յիշեցի, գարնանից մինչև աշունը, քաղու-
ումէ երեք և մինչև չորս անգամ : Այս եօնջայի կը-
կու այլ տեսակը, որոնք ընտանեցրած չեն, այլ հա-
մարուում են իբրև վայրի խոտեր . դուրս են գալիս ա-
ամեն տեղ . առաջինը կոչուումէ դարայ—եօնջայ կամ



աւ առոյս և երկրորդ՝ էշառոյս, որ միայն իշու կերաս-
 կուր է համարուում: Սորանցից առաջինը, սյսինքն
 աւ առոյսը փուռումէ գետնի երեսը և ցողուններն
 ունին մնյգ դոյն կապոյս ծաղ իկներով: Իսկ երկրոր-
 դը, սյսինքն իշառոյսը արձակումէ բաւականին հաստ
 ցողուններ, որոնք մի մարդաչափ բարձրանալու ըն-
 դունակութիւն ունեն և տալիս են գեղին ծաղիկ-
 ներ: Այս վերջինն իւր կողտութեամբ դասուումէ
 անպէտք խոտերի (сорная трава) կարգը:

Աերջապէս ես հարկաւոր եմ համարում յիշել
 այստեղ խոտերի կարգում, աւելախոտք, որից ամեն
 մի տեստութիւն սիրող մարդ ցանումէ իւր պար-
 տիզում ու բազում նորանից աւերներ կապելու հա-
 մար: Էտլշոնք, որ բուսնումէ դաշտերում, անջրդի
 տեղեր և ունի խիստ կծու հոտ ու ծառայումէ նոյն-
 պէս աւել շինելու համար: չօղանը—օշնանը—sapo-
 nariae radix, որ մի տեսակ փշանման խոտ է և, սա-
 պոնի նման լպրծուն յատկութիւն ունենալով, գիւ-
 ղացիների մօտ գործ է դրուում շոր լուանալու հա-
 մար և շոտոնք, որ չօղանին քիչ թէ շատ նման է
 և իսկ Աովկասի բոյս է համարուում: Սորանից երեւ-
 նի և էջմիածնայ գաւառներում կարաքար են շինում
 սորա համար ահագին փոսեր քանդելով և նորանց
 մէջ այրելով այդ բոյսը:

Գրքիս Տէջ եղած թի քանի տառնանշանաւոր

ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

Սխալ	Ուղիղ	Երես	Գումար
Նովրած	Նովրաստ	8	13
Դ.	Ե.	56	3
րտերին	ցրտերին	57	7
Լուսածաղիկ	լուածաղիկ	66	16
aamlicnta	calamentha	72	3



A $\frac{11}{16215}$

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ. 50Կ.

Մախուհակ պ. Արզար Գուլամիրեանցի
ի՛տա՛ նրևանում և «Կենտրոնական Գրա-
վաճառանոցում», Թիֆլիսի մէջ:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010285

A $\frac{11}{16215}$